



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2183

her Sunday  
property

241

U-35

1870

241  
U-35

2012


Մ Ա Ր Դ Ի Կ

Ա.ՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՐՁԻ


ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՔՐԻՍՏՈՆԷՐԾ ԸՆԵԼՈՒ ԶԵՆՔԵՐՈՒՆ  
ՆԱՏՄԱՐ

### ՀԱՄԱՌՕՏ ԽՐԱՏՆԵՐ



« Ան որ մեղաւորը իր մոլորութեան ճամբայէն  
կը դարձնէ, հողի մը մահուանէ կ'ազատէ » : Յակ.  
Ե. 20 : « Եւ անոնք որ շատերը արդարութեան  
կ'առաջնորդեն՝ աստղերուն պէս պիտի փայլին յաւ  
ւիտեանս յաւիտենից » : Դան. ժԲ. 3 :



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Յ. ՄԻՆԱՍԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ԱՄՄԱ ԱՂԹԸ ՏՈՄԷԸ ԽԱՆ ԹԻԿ 5


1870

2010

2007

# ՀԱՄԱՌՕՏ ԽՐԱՏՆԵՐ

ԱՌ ԳՐԻՍՏՈՆԵԱՅՄ



Ա. ՄԵՐԿՈՑ ԵՆՄԻՋԱԿԱՆ ԱՊՆԵԽՆԵՐՈՒԹԵԱՆԸ  
ՆԿԱՏՄԵՍՐ ԸՆՈՒՑ ՀՅՏ ԽՕՍԵԿՑԵԼՈՒ  
ՊԵՐՏԵԿԵՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՈՐ  
ԿԱՐԵՒՐՈՒԹԵԱՆԸ ՎԲԱՑ

Մեր մեղսակիցներուն հետ իրենց հոգինե-  
րուն փրկութեանը նկատմամբ առանձնաբար  
խօսակցելուն մեր վրայ հարկադրեալ ՊԱՐՏԻ  
մը ըլլալը Առաւելաձային պատուիրանքէն  
և նոյն խոյն ընկերօրութեան ընտելեանէն  
յայտնի է: Գրուած է թէ, «Քու ընկերդ  
քու անձիդ պէս սիրես».— «Եւ ոմանք վա-  
խով ազատեցէք, կրակէն յախշտակելով զա-  
նոնք».— «Ան որ մեղաւորը իր մտերու-  
թեան ճամբայէն կը դարձընէ, հոգի մը մահ-  
ուանէ կ'ազատէ»: Մատթ. ԺԹ. 19: Յուդ.  
23: Յակ. Ե. 20:

Չէ որ բոլոր մարդիկ բարեկեցիկ ժամա-  
նակաւոր վտանգներէ ազատելու ջանքեր  
ընելը իրենց անժխտելի պարտք կը համար

53076-ախ



39307-67

րին : Միթէ ամենածանր եղեւնագործու-  
թեամբ յանցաւոր չի՞ սեպուիր այն անձը որ  
մարդ մը կրակով կամ ջուրով մեռնելու վե-  
րահաս վտանգին մէջ կը տեսնէ , և զանիկա  
ազատելու բնաւ ջանք չընէր : Եւ արդեօք  
հոգին մարմինէն քիչ արժէք ունի : Արդեօք  
յաւիտենական կորստեան վտանգի մէջ եզոզ  
հոգին ազատել ջանալու պարտականութիւնը  
փոքր պարտականութիւն մըն է : Եւ եթէ  
մէկը իր ընկերը հոգևոր մահուան վտանգի  
մէջ տեսնէ ու զանիկա ազատելու ջանք չընէ,  
այդպիսի երևելի պարտականութիւն մը զանց  
ընելուն յանցանքը միթէ թեթևագոյն յան-  
ցանք մը եղած կըլլայ :

Այս գործին ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆՅՆ ալ նմանա-  
պէս շատ յայտնի է : Իրական ճշմարտութիւն  
մը չէ՞ որ մարդոյ փրկութիւնը , նոյն իսկ  
Աստուածային սահմանադրութեամբ , այս-  
պիսի ջանացողութիւններէ կախում ունի .  
այնպէս որ կրնանք յուսալ թէ ուր որ այս  
պարտականութիւնը ըստ արժանւոյն իդործ  
դրուի , հոն մարդիկ մեծ թուով մը դարձի  
գան և Քրիստոսի յարին : Եւ արդեօք մար-  
դոյ հետ իրենց փրկութեանը վրայ անձամբ  
և առանձնաբար խօսակցելէն աւելի յարմար  
միջոց մը կա՞յ անոնց մխտքը կրօնական նիւ-  
թերու զարթուցանելու : Միթէ կա՞յ զմար-

դիկ դարձի բերելու ուրիշ միջոց մը , գոր-  
քրիստոնեայք աւելի յաջողութեամբ դոր-  
ծածած ըլլան քան զայս :

Նա մանաւանդ այս երկրիս մէջ ճշմար-  
տութիւնը ընդունող մարդիկ մասնաւոր  
պատճառներու համար ևս աւելի պարտա-  
կանութեան տակ են իրենց շուրջը գտնուող-  
ներուն դարձին համար յատուկ ջանքեր  
ընելու : Հարիւրաւոր և հազարաւոր հոգի-  
ներ կան որ անտեղեակ են ճշմարտութեան ,  
չեն հանդիպիր երբէք այն տեղերն ուր  
ճշմարտութիւնը պարզօրէն կը քարոզուի :  
Անոնք երբէք ճշմարտութիւնը սորվելիք  
չունին , եթէ ճշմարտութեան հմուտ գրացի-  
ներ և բարեկամներ զանոնք սորվեցունելու  
յատուկ և անձնական ջանքեր չընեն :



Բ . ԱՅՍ ՊԵՐՏԵՆՆԵՐԹԻՒՆԸ ԿԱՏՐԵԼԱԻ  
ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Յայտնի է թէ ասանկ մեծ և կարևոր  
պարտականութիւն մը առանց յատուկ և  
յարմար պատրաստութեան չի կրնար կա-  
տարուիլ : Դիւրին չէ մարդու մը հետ օգ-  
տակար կերպով անոր հոգևոր վիճակին վրայ  
խօսիլ : Խօսողը պէտք է որ դիտնայ թէ ինչ  
պիտի ըսէ որ խօսքը տեսութիւն ըրած ան-

ձանց վիճակին յարմար ըլլայ. և մասնաւո՞ւ  
րապէս հարկ է որ իր սիրտը ճշմարիտ և  
շերմ սիրով լեցուած ըլլայ անոնց համար :  
Ուստի վերոյիշեալ գործին լաւ պատրաստու  
թիւն ունենալու համար՝ կ'ըսենք ընթեր  
ցողին .

1. Միշտ մտքիդ առջիւր պահէ անապաշ  
խար մարդոց վիճակը, ճիշդ այնպէս ինչպէս  
որ նկարագրուած է Աստուածաշունչ Գրոց  
մէջ : Չանոնք նկատէ իբրեւ հանապաղ կոր  
սուած հոգիներ. իրենց անհաւատութեանը  
և մեղացը համար արդէն իսկ դատապար  
տուած ; և ամէն վայրկեան կորսուելու եւ  
թակայ : Կատարեալ հաւատք ընծայէ այն  
բաներուն զորոնք Աստուած վկայած է՝ այս  
պիսի մարդոց զարհուրելի վիճակին նկատ  
մամբ : Առանց այսպիսի հաւատքի մը մէկը  
չի կրնար այս գործին մէջ ըստ արժանւոյն  
վարուիլ : Խորհէ թէ ինչ տեսակ գործ է կա  
տարելու գործդ : Չէ՞ որ մարդիկ դժօխ  
քէն իրկել, զանոնք կրակէն դուրս քաշել,  
կիսայրեաց փայտերու պէս զանոնք հնոցէն  
դուրս հանել է . գործքեր՝ որ ոչ յապաղ  
ման կու գան, ոչ վարանման, և ոչ թուրու  
թեան : Իր բարեկամներուն և դրացիներ  
րուն իրկութեանը համար աշխատիլ ուղղ  
մարդն՝ իր բոլոր զօրութիւնն՝ ՚ի գործ դնելու

է, ապա թէ ոչ չի կրնար յաջողիլ : Ստոյգ է  
որ մարդ մը ինչ գործի մէջ որ ըլլայ, ան  
գործին կարևորութեան համեմատ զօրաւոր  
շարժառիթներու կարօտութիւն ունի : զինքը  
գործի շարժելու համար : Ահա անապաշաւ  
մեղաւորաց վիճակին վրայ ուղիղ տեսու  
թիւն ունենալն՝ ամենայն զօրութեամբ ա  
նոնց իրկութեանը համար աշխատելու այն  
պիսի հզօր շարժառիթներ կը ներկայացնէ  
քրիստոնէից . անանկ որ չի կրնար ըլլալ թէ  
քրիստոնեայ մը ուղիղ և յստակ տեսու  
թիւն ունենայ մեղաւորաց դատուած վիճա  
կին վրայ, և իր սիրտը չշարժի անոնց  
իրկութեանը համար մեծամեծ ջանքեր ընե  
լու . իսկ այսպիսի բաներու նկատմամբ հա  
ւատոյ պակասութիւնը ուրիշ ամենազօրեղ  
շարժառիթներուն ուժն անգամ կը տկարա  
ցընէ, և մարդուս ներսիդին անտարբերու  
թիւն կամ վարանմունք մը յառաջ կը բերէ :

2. Թող հոգւոց իրկութիւնը ներքին սաս  
տիկ բաղձանքի առարկայ մը ըլլայ քեզի :  
Իրաւցընէ չկայ քան զայս առաւել բաղձալի  
բան մը . ինքն իսկ Աստուած ամենաբարին  
վկայած է ասոր՝ իր որդին մարդոց իրկու  
թեանը համար տալով : Աշխարհիս վրայ չկայ  
բան մը որուն ճշմարիտ բարեսէր անձ մը ա  
ւելի խորին զգացմամբ ցանկայ, քան հոգ

ևոց փրկութիւնը : Աւրեմն միտքդ բեր թէ մեր ամենուն ձեռքն է այս կարեւոր նպատակին համար ախատիլ, և թէ շատ զօրաւոր շարժառիթներ կը ստիպեն մեզ առ այս : և թէ ան որ այս բարեսէր նպատակին փափաք չունի, շուտով պէտք է որ ունենայ, ապա թէ ոչ չըսէ թէ ճշմարիտ քրիստոնէի վարք ու բարք ունի : Ո՛վ կրնայ ըսել թէ ինք Քրիստոսի հոգին կը կրէ իր ներսիդին, քանի որ զուրկ է ուրիշներուն փրկութեանը համար այսպիսի բաղձանքներէ :

3. Արոչում ըրէ որ քու մօտդ եղողներուն դարձին համար պէտք եղած աշխատութիւնը երբէք ձեռքէ չթողուս, մինչև որ անոնք Աստուծոյ օրհնութեամբը դարձի գան : Կարելի է թէ մեր բարեկամներուն հետ կրօնական նիւթերու վրայ խօսակցինք, ոչ թէ անոնց օգուտ մը ընելու որոշ դիտաւորութիւն կամ յոյս մը ունենալով, այլ լոկ մեզի կրօնական պարտականութիւն համարուած գործ մը կատարելու համար : Կարելի է նաև, այնքան պաղ կերպով կամ այնքան նուազ եռանդով այս պարտականութեան կատարմանը պարագիլ, որ մեր բոլոր ջանքերը պարագ ըլլան : Պէտք է որ սրտերնուս մէջ յոյս ունենանք, Աստուծոյ շնորհօքը, անապաշաւը իրականա-

պէս դարձի բերելու . և ոչ այսչափ միայն, այլև կատարեալ և հաստատուն դիտաւորութիւն ունենալու ենք զանիկայ Աստուծոյ առաջնորդելու : Կորսուածին փրկութիւնը մեր անդրդուելի դիտաւորութիւնն ըլլալու է :

4. Այս պարտականութեան կատարմանը դէմ եկող բոլոր երեւակայական արդեւքները մէկդի ընելու ենք մեր մտքէն : Շատ մարդիկ ուրիշներուն հետ անոնց հոգւոյն փրկութեանը վրայ խօսելէն ետ կը քաշուին, ըզմարդիկ շատ առաւել դժկամակ համարելով կրօնական նիւթերու վրայ խօսակցելու՝ քան որչափ որ են իսկապէս : Չեն մտածեր որ անապաշխար մարդիկ շատ անգամ իրենք կը փափաքին որ քրիստոնեաներն իրենց հետ խօսակցին, և կը զարմանան թէ ինչու համար անոնք բան մը չեն խօսիր . և քրիստոնեայ բարեկամաց աս բանը չընելէն անոնց անկէղծ քրիստոնէութեանը վրայ կը տարակուսին : Չեն կրնար հաւատալ թէ այն քրիստոնեայ բարեկամները իրաւքնէ զանոնք յաւիտենական կործանման վտանգի մէջ կը ճանչնան, քանի որ բնաւ ջանք չեն ըներ զանոնք յորդորելու որ այնպիսի ահեղ կորուստէ մը փախին :

5. Մտիդ մէջ ունեցիր այն վատահոլութիւնն ու քաջալերութիւնը, որ այս գործին

մէջ յաջողելու յոյսէն յառաջ կու գայ: Բաց-  
 ձացած քանդ, այսինքն բարեկամներու դ-  
 փրկութիւնը, անանկ բան մըն է, որ շնորհօքն  
 Աստուծոյ՝ ձեռք կրնայ բերուիլ: Ասիկա  
 յայտնի է Աստուծոյ խօսքէն և անոր Նա-  
 խախնամութենէն, բայց մեր գտնելու յա-  
 ջողութիւնը մեծապէս կախում ունի մեր աշ-  
 խատութեան վրայ վստահութիւն օւնենալ-  
 նէս կամ չօւնենալնէս:

6. Գարձի գալուն բնութեանը՝ այսինքն  
 անոր ինչ բան ըլլալուն վրայ յստակ դա-  
 ղափարնէր ունեցիր: — Որովհետև դիտած  
 վախճանդ մեղաւորներուն դարձն է, պէտք  
 է որ այս դարձին նկատմամբ որոշ և յստակ  
 տեսութիւն ունենաս: Ի՞նչպէս կրնաս միտ-  
 քըդ դնել որ և իցէ արդիւնք մը յառաջ բե-  
 րելու, կամ անիկա յառաջ բերելու համար  
 պէտք եղած միջոցները ընտրել, քանի որ  
 այն արդիւնքին ինչ ըլլալը որոշ և յստակ  
 կերպով չես գիտեր:

Մեղաւորաց դարձին վրայ շատերուն գա-  
 ղափարնէրը անորոշ և չփոթ են:

Ոմանք դարձի գալու գործին վրայ շատ  
 թեթեւ գաղափար մը ունենալով՝ կը կար-  
 ծեն թէ դարձի գալ ըսելը կը նշանակէ ընդ-  
 հանուր կերպով մեղքը ճանչնալով մեղայ  
 ըսել: Ոմանք ալ կը կարծեն թէ Սուրբ Գրոց

այս նկատմամբ դործածած այլաբանական  
 խօսքերը, ինչպէս՝ «Նոր արարած», «Վե-  
 րստին ծնունդ», «Մեռելներէն յարութիւն  
 առած», և այլն, մկրտութեան և ուրիշ ար-  
 տաքին արարողութեանց կը վերաբերին:  
 Ասոնց երկուքն ալ սխալ կարծիք են: Գարձի  
 դալը ոչ թէ թեթեւ փոփոխութիւն մը, կամ  
 արտաքուստ կատարուած արարողութիւն  
 մըն է, այլ մարդուն ներսիդին և իր մտա-  
 ւոր կարողութիւնները դործածելու եղանա-  
 կին մէջ կարևոր փոփոխութիւն մըն է:

Շատերն ալ մեղաւորին դարձին մէջ Հոգ-  
 ւոյն Սրբոյ ըրած ներդործութենէն՝ կը կար-  
 ծեն թէ բոլոր այն դարձը ամբողջովին անի-  
 ժանախի գաղտնիք մըն է. բայց աս ալ սխալ  
 է: Հոգւոյն Սրբոյ ներդործելուն եղանակը  
 գաղտնիք կրնայ ըլլալ, սակայն անոր ներ-  
 դործելովը մարդուս մտքին մէջ յառաջ բեր-  
 ուած փոփոխութիւնը կատարելապէս իմա-  
 նախ և պարզ է: Խորհրդով և կամաւ մեղ-  
 քէ՛ ՚ի սրբութիւն փոխուիլ է: Մեղաւորը որ  
 առաջ մեղքը միայն կը սիրէր և անոր կը ծա-  
 ուայէր, հիմա զԱստուած միայն կը սիրէ և  
 անոր կը ծառայէ: Նախ կը սկսի իր յանցա-  
 ւոր ըլլալը ճանչնալ, և մեղքին տրհամարհելի  
 և զգուելի բնութեանը և կործանիչ ազդե-  
 ցութեանը վրայ ուղիղ ըմբռնում ունենալով՝



անկէ կը դառնայ, անկեղծաբար ցաւելով իր մեղապարտութեանը վրայ, և հաստատաբար որոշելով և առաջադրելով որ այնուհետև մեղքը բոլորովին առէ ու մերժէ, իր սէրը Աստուծոյ վրայ միայն հաստատէ, և Անոր սուրբ կամբին կատարելագէս հնազանդելով ապրի: Բայ ասոնցմէ՝ անկեղծ և սիրալիր վստահութիւն մ'ալ կ'ունենայ Քրիստոսի փրկագործութեանը վրայ, զանկա ճանչնալով իբրև մի միայն և բաւական միջոց քաւութեան մեղաց:

Նախ քան զդարձն, մեղաւորը իրեն համար միայն կ'ապրի. անոր կենաց նպատակը իր անձին հաճելի բաներ, իր շահը, պատիւը, երջանկութիւնը փնտռելն է, ամենին չի մըտածեր և կամ շատ քիչ կը մտածէ Աստուծոյ և անոր պահանջումներուն վրայ, և թէ ինչպէս հաճոյ ըլլալու է Անոր: Իսկ դարձի դալէն ետքը, անոր մեծ բաղձանքը և աշխատութիւնը կ'ըլլայ Աստուծոյ հաճոյ ըլլալ: Անոր պատուիրանքներուն վրայ այնպէս կը սկսի մտածել և զանոնք այնպէս կը սկսի սիրել, որ առաջ երբէք այնպէս ըրած չէր: Ուրեմն դարձի դալ ըսելով կը հասկըցուի անձին և անձնասիրական մեղանշական կրօնյ ծառայութենէն Աստուծոյ ծառայութեանը դառնալ:

Ահա կը տեսնուի թէ ապաշխարութիւնը և դարձի դալը, կենաց նպատակին նկատմամբ, մարդոց միտքերուն և գործքերուն մէջ պարզ փոփոխութիւններ են: Մարդոց մտքին և սրտին և գործքերուն մէջ այսպիսի փոփոխութիւններ յառաջ բերելու նպատակաւ կրնանք ուղղակի աշխատիլ, ինչպէս որ՝ որ և իցէ մտաւորական փոփոխութիւն յառաջ բերելու համար կրնայ աշխատուիլ: Մարդ մը կրնայ այնքան որոշակի և ուղղակի կերպով աշխատիլ ուրիշները համոզելու որ իրենց կենացը նպատակը և վարքը փոխեն, որքան որ կրնայ համարձակօրէն աշխատիլ զանոնք համոզելու որ՝ ուրիշ որ և իցէ բանի մը նկատմամբ իրենց նպատակը և վարմունքը փոխեն: Արդարև այս կերպ փոփոխութիւններ յառաջ բերել աւելի դժուարին է քան թէ ուրիշ տեսակ փոփոխութիւններ յառաջ բերել, և ասոր համար է որ այս գործին մէջ մեր ըրած ջանքերուն յաջողութեանը համար Հոգւոյն Սրբոյ օգնութեանը կարօտ ենք. սակայն եղած փոփոխութիւններն, ըստ ինքեան նըկատելով, որ և իցէ կերպ փոփոխութեանց չափ դիւրիմաց են, և Աստուածային օգնութեամբ զանոնք յառաջ բերել մեր ուղղակի նպատակն ըլլալու է:

Ուստի առաջարկեալ գործին իմաստութեամբ և յաջողակութեամբ հետամուտ ըլլալու համար, այս նիւթին վերաբերեալ գըլխաւոր սկզբունքները որոշ կերպով մտքիդ առջևը պահէ: Մտածէ թէ ինչ բան է *Վերսուս* ՚ն ըլլալը. թէ մեղաւոր ըսելով կը հասկըցուի ազատ գործող մը, որ կարող է սուրբ ըլլալ, զՍտուած սիրել և անոր կամքը կատարել, և սակայն ասոնց մէկն ալ չընենք. այլ Ստուծոյ օրէնքը զանց ընելով, իր կարողութիւնները չարաչար կերպով մեղաց ծառայութեանը կը գործածէ, և բացարձակ անձնասիրութեան իշխողութեանը տակ կը գործէ: Մտածէ թէ ինչ բան է *անգիւղ* և *անհասարակ* ՚ն ըլլալը. թէ այդ անանկ ահաւոր վիճակ մըն է, որ ատոր մէջ եղողը թէև կարող է տեսնել մեղքին բնութիւնը և չարութիւնը, խոստովանիլ զայն, ցաւիլ անոր վրայ, և արհամարհել զանիկայ, սակայն չընենք. Քրիստոսի քաւութեանը, և անոր փրկական զօրութեանը վրայ տեղեկութիւն կ'ունենայ և Քրիստոսի հաւատալուն հարկաւորութիւնը կ'իմանայ. սակայն չուզեր զՔրիստոս սիրել կամ անոր ապաւինիլ: Աս բաներուս վրայ համոզումը զօրեղ ու կենդանի ընելու համար՝ միտքդ բեր քու անզեղութեանդ նախկին օրերը, և խորհէ

թէ ինչպէս համարձակութեամբ և յամառութեամբ կը հրաժարէիր Ստուծոյ ձայնին հնազանդելէն: Որոշ կերպով աչքիդ առջևը բեր քու դարձի գալուդ ատենը պատահած փոփոխութիւնը, որ յօժարակամ և հիմնական դարձ մըն էր մեղքէն սրբութեան, և ախարհի ծառայութեանէն Ստուծոյ ծառայութեանը, մեղաց համար անկեղծ ապաշխարութիւն, և ճշմարիտ հաւատք առ Տէր մեր Յիսուս Քրիստոս: Մտածէ աս փոփոխութեան վրայ, թէ ինչպէս եղաւ քու անձիդ մէջ, և միտքդ դիր թէ նոյնը ուրիշներուն վրայ ալ յառաջ բերելու համար ջանք ընելու ես:

7. Ուղիղ տեսութիւն և գաղափար ունեցիր այն ընթացքին և եղանակին նկատմամբ, որով, ըստ Սուրբ Գրոց, Ստուած կը ներգործէ մարդուս դարձի գալը: Փրկիչն մեր Քրիստոս կ'ըսէ (Յօհ. 2. 44) « Մէկը չկըրնար ինձի գալ, թէ որ զիս խրկող Հայրը զանիկա չքաշէ»: Արդ ի՞նչպէս կը քաշէ Ստուած զմարդիկ առ Քրիստոս: Իր Հոգւոյն ազդեցութեամբը, իր բանիւր, և իր նախախնամութեամբը: Աստուած մարդիկ դարձի բերելու համար իբրև գործիք կը գործածէ նաև իր ծառաներուն, պաշտօնէից և աշխարհականաց ջանքերն ու աշխատու

թիւնները: Վասնորոյ պէտք չէ որ ասոնք երբէք խորհին թէ, Որովհետև Աստուած քաշելու է մարդիկ 'ի փրկութիւն, մենք կըրնանք անսիրտ և անգործ տեղերնիս նստիլ: Այս բանիս մէջ ճշմարիտ վարդապետութիւնըն այս է, որ Աստուած միջոցներով կը քաշէ, և իր զօրութիւնը մեր աշխատութիւններուն հետ կապակցելով կը գործէ: Աստուծոյ բռնած այս ընթացքը շատ մեծ քաշալերութիւն կու տայ մեզաւորաց դարձին համար աշխատողներուն, և ոչ բնաւ յուսահատութիւն: Քարեշնորհն Աստուած իր օրհնութիւնը ամենէն աւելի անոնց կը մատուցանէ, որոնք մեծ իմաստութեամբ և յարատևութեամբ կ'աշխատին հոգւոց փրկութեան համար: Այս տեսութեամբ, մարդոց դարձին և փրկութեանը մէջ Աստուծոյ գործելուն վարդապետութիւնը մեզի համար ամենէն ազդու շարժառիթն եղած կ'ըլլայ ջանացողութեան: Յայտնի ճշմարտութիւն մըն է թէ Աստուած կը բաղձայ որ մարդիկ փրկութեան հասնին. կը բաղձայ ալ որ մենք ամէն ջանք 'ի գործ դնենք այս ամենակարևոր վախճանը ձեռք բերելու, և սուղիւ պիտի օրհնէ մեր բոլոր աշխատութիւնները, երբ հաւատարմաբար պարապինք անոնց: Այս համոզումն ունեցիր և մեծ քաշալե-

րութիւն պիտի ունենաս ջանալու. պիտի դիտնաս, թէ Աստուած գործակից է քեզի. և անատեն բնաւ չես երկմտիր, չես յուսահատիր, միշտ կը զօրանաս Տէրոջը գործին մէջ, վասն զի լաւ կը դիտնաս թէ աշխատութիւններդ Տէրոջմով պարապ պիտի չելին:

39307-17

Տ. Իմաստութիւն և զօրութիւն ստացիր աղօթքով: Առանց ջերմեռանդ և յարատև աղօթքի այս գործիս պատրաստութիւնը ձեռք չի բերուիր: Աստուած է աղբիւր ամենայն իմաստութեան և զօրութեան, և առանց անոր կարող չենք բան մը ընելու:

Արեմն շնորհաց աթոռէն երբէք չհեռանաս: Սիրող ու միտքդ աղօթասիրութեամբ լեցուն ըլլայ միշտ: Որչափ որ կրնաս, առանձին աղօթք ընելու ետևէ եղիր մեր Տէրոջը օրինակը յիշելով, որ բոլոր օրը աշխատելէն ետքը, ամբողջ դիշերն ալ առանձին աղօթքով կ'անցընէր: Ետ թախանձանօր պաղատանդդ ներկայացուր ամենայն ողորմութեանց և գթութեանց Հօրը: Եւ երբ Աստուծոյ կը մօտենաս, անմահ հոգւոց անհուն արժէքին վրայ խորին զգացմամբ մօտեցիր. և սրտառուչ աղաղակաւ և պաղատանօր սկսողութեամբ Անոր առջևը, և մի գործ միջոցով որ լեցուիս



Հոգևով Սրբով և հաւատքով: Աղօթքը ուրիշ ամէն բանէ աւելի քաջալերական և կազդու-  
րիչ ազդեցութիւն մը ունի. մանաւանդ մար-  
դոց փրկութեանը համար եղած ջերմեռանդ-  
աղօթքը զանիկա ընողին սրտին մէջ յոյս կը  
ծնուցանէ:

9. Հոգևոց փրկութեան համար բարեօր-  
րական զգացումներդ և փոյթդ այն աստի-  
ճան թող հասնին, որ ստուգիւ համակրու-  
թիւն ունենաս նոյն ինքն Փրկչին մերոյ Յի-  
սուսի Քրիստոսի հետ այս մեծ ու ահաւոր  
գործին նկատմամբ: Անոր ունեցած տեսու-  
թիւններուն և զգացումներուն հմուտ եղիր,  
մինչև որ դուն ալ անոր ունեցած տեսու-  
թեանց և զգացմանց տէր ըլլաս: Անոր հետ  
մէկտեղ մի և նոյն միտքը ունեցիր: Հոգևով  
եւ անոր հետը երկինքէն իր փառաց գահէն  
և ի՛յիր աշխարհք. տես զինքը Բեթլէհէմի  
մուրին մէջ պառկած. անոր խղճալի տղբա-  
տութեանը, զարմանալի զրկումներուն ու  
չքաւորութեանը, անոր եղած անողորմ հա-  
լածանքներուն, սաստիկ յողնութիւններուն  
և քրոնսչան աշխատութիւններուն. Գեթ-  
սեմանիի պարտէզին մէջ կրած տաղնապին  
ու անձկութեանը միջոցին, և խաչին վրայ  
ճաշակած դառն մահուան ատենը կրած  
խայտառակութեանցը և նախատինքներուն

մէջ, անոր հետ եղիր: Քրիստոս, մեր փր-  
կութեան առաջնորդը, իր կրած հոգիովը  
և բրած զոհողութիւններովը ցուցուց թէ  
իր դրօշակին տակ ճգնող բոլոր զինուորները  
ինչ հոգևով հետամուտ ըլլալու են այս իրենց  
պարտականութիւնը կատարելու: Անոնք  
պարտական են հոգիներուն արժէքը ճանչ-  
նալ՝ ինչպէս որ ան կը ճանչնար, սիրել զա-  
նոնք՝ ինչպէս որ ան կը սիրէր, և եթէ հարկը  
պահանջէ, նեղութեանց և տառապանայ  
տանիլ անոնց փրկութեանը համար, ինչպէս  
որ ան տարաւ:



Գ. ԳՈՐԾԵԼՈՒ ԸՆԹԱՅՔԸ

1. Ամենէն առաջ և մասնաւորաբար ջանք  
ըրէ զանոնք դարձի՛ բերելու, որոնք Աս-  
տուածային նախախնամութեամբ՝ քու հետդ  
ընտանութիւն և կապակցութիւն ունին. ինչ-  
պէս են քու ազգականներդ, քու դրացի-  
ներդ և ճանչուորներդ, ևն: Աստուած իւ-  
րաբանչիւր քրիստոնէի մասնաւոր ասպարէզ  
մը կու տայ գործելու, և անոր վրայ պարտք  
կը դնէ մասնաւոր եռանդով աշխատիլ անոնց  
փրկութեանը համար, որոնց հետ անիկա ան-  
միջական կապակցութիւն ունի և որոնց վրայ  
ազդեցութիւն կընայ ունենալ: Վասնորոյ

հոգ տար մանաւանդ անոնց, որոնց վրայ ամենէն աւելի ազդեցութիւն ունիտ, և յատկապէս ջանա անոնց դարձի գալուն: Մի շատանար ընդհանուր կերպով բոլոր մարդոց փրկութեանը համար բաղձանք միայն ունենալով և ազօթք ընելով: Մեծամեծ ու բազմաթիւ դարձեր միտքդ դնելով, մասնաւորաց համար աշխատելու զանց մի ընել: Բոլոր մեծամեծ արդիւնքները յատուկ ջանքերէ կախեալ են, և անոնցմէ ծնունդ կ'առնուն. և եթէ բոլոր քրիստոնեայք մասնաւոր կերպով աշխատելու ըլլան այս և այն անձին փրկութեանը համար, որչափ որ պատեհութիւն և առիթ կրնան ունենալ, շատ աւելի գործ կրնան տեսնել քան թէ սոսկ ընդհանուր բաղձանքներով, ազօթքներով և ջանքերով:

2. Մէկուն համար մասնաւոր կերպով աշխատելու որոշում ընելէդ ետքը, նայէ որ նախ զինքը համոզես Աստուծոյ Խօսքը մտադրութեամբ կարգալու, և եթէ կարելի է՝ աւետարանական քարոզութեանց ունկնդրութեան յաճախելու, և մանաւանդ իր կարգացածներուն և լսածներուն վրայ ծանրութեամբ մտածելու. յորդորէ զանիկա իր մտադրութիւնը ճշմարտութեան վրայ հաստատելու ոչ թէ վեր ՚ի վերոյ և անհոգու-

թեամբ, այլ փութով և յօժարութեամբ, զխոնարհով որ իր ներսիդին փոփոխութիւն մը յառաջ բերելու միջոցն ու գործիքը այն է: Վասն զի Հոգին Սուրբ ալ ճշմարտութեան միջոցաւ մարդը դարձի կը բերէ. և մինչև որ մարդուն միտքը կատարելապէս անոր ազդեցութեանը տակ չիյնայ, չենք կրնար այն փոփոխութիւնը ակնկալել: Աստի այս վախճանը ձեռք բերելու համար,

3. Քաղցրութեամբ և ընտանեբար հարցուփորձ ընելով տեղեկացիր և ստուգէ թէ մինչև այն ատեն ինչ գաղափարներ ունեցած է փրկութեան ճամբուն նկատմամբ, և գտիր թէ ինչ բաներու մէջ սխալմունք ունի:

4. Հասկըցիր նաև իրմէ թէ արդեօք որոշ և հաստատուն դիտաւորութիւն մը ունի՞ իր հոգւոյն փրկութիւնը ձեռք բերելու նկատմամբ:

5. Եթէ անտարբեր վիճակի մը մէջ է, և փրկութեան ճամբուն նկատմամբ միայն անորոշ գաղափար ունի, առանց հետը վէճի մտնելու, քաղցրութեամբ աշխատէ լուսաւորելու անոր միտքը: Եւ մասնաւոր զիտաւորութիւնդ ըլլայ իր անձին փրկութեանը նկատմամբ մեծ փոյթ զարթոնցանել անոր սրտին մէջ: Պարզապէս առջևը դիր իր առ Աստուած ունեցած յարաբերութիւնները,

և թէ յաւիտենականութեան մէջ ինչ պիտի ըլլայ իր բաժինը, եթէ անզեղ մեռնի. և մեծ կարեկցութեամբ հարցուր անոր թէ՛ քանի որ իք անհուն արժէք ունեցող հոգին ասանկ վտանգի մէջ է, կրնա՞յ ինք անխոյթ մնալ: Յորդորէ զանիկայ որ անհոգութիւնը մէկզի ձգելով, իր փրկութեանը վերաբերեալ Սուրբ Գրոց խօսքերը անոնց բոլոր զօրութեամբը իր մտքին առջև պահէ, և հաստատութեամբ որոշում ընէ թէ պիտի կատարէ՞ ինչ որ Աստուած կը պահանջէ փրկութեան հասնելու համար: Յորդորէ նաև որ ինքզինք բոլորովին այս մեծ գործին տայ, և բոլոր ուրիշ գործերը թողով իր հոգւոյն զգացումներն ու կարողութիւններն ասոր դարձնէ:

Այս յորդորներն ըրած ատենդ՝ շատ անգամ մեծ դժկամակութիւն պիտի տեսնես մեղաւորին կողմէն: Ըրած յորդորներդ անզեղ մարդոց բնական հակամիտութիւններուն դիմովին հակառակ կու գան. այսպիսիները բնականօրէն կը դժկամակին ըսածներդ կատարել. Աստուծոյ պատուիրանքներուն ուշադիր ըլլալ չեն ուզեր, քանզի անիկա անմիջական հնազանդութիւն կը պահանջէ: Եւ սակայն այն յորդորները բացարձակ կարևորութիւն ունին: Վասնորոյ մեծ ջանք գոր-

ծածէ աս բանիս մէջ. գորովալից կերպով ամէն կերպ համոզարար և սրտաշարժ մտածութիւնները ներկայացուր: Յիշեցուր Աստուծոյ բարութիւնը և անոր պահանջմունքներուն արդարութիւնը: Յուցուր մեղքին վատթարութիւնը, և անոր հետեանքները: Խօսէ նաև մարդուս պարտաւորութեանց, երջանկութեան համար ունեցած բնական սիրոյն, թշուառութենէ վախնալուն, և անմիջական և սրտեռանդն ջանացողութենէ յառաջ գալու արդիւնքներուն վրայ: Բացատրէ որ ամենևին պատճառ չկայ Աստուծոյ պահանջածներուն գործադրութիւնը ուշացնելու, և թէ ամէն պատճառ կայ անմիջապէս զայն 'ի գործ դնելու. թէ յապաղումէն ամենևին շահ մը չկայ, այլ շատ վնաս, և թերևս յաւիտենական կորուստ. թէ՛ եթէ դժուարութիւններ կը տեսնուին, դանդաղութիւնը և յապաղումը զանոնք աւելի կը մեծցնեն. և աշխարհասիրութիւնը և մեղանշական ունակութիւնները որ քան զօր առաւել ևս կը զօրանան. և թէ մարդանզեղութեան մէջ յամսուեալ մնալով կրնայ 'ի բարկութիւն շարժել զԱստուած. թէ՛ փրկութիւն գտնելու ամենէն յարմար ժամանակը հիմա է:

6. Յորդորէ մեղաւորը որ ձգէ բոլոր այն

բաները որոնք իր բարի խորհուրդներուն արգելք են, հրաժարի այնպիսի մարդոց ընկերութենէն, որոնք կրնան անոր պատճառըլալ մեղանշական ընթացքի մէջ շարունակելու, և իր հողւոյն փրկութեանը համար ամենէն նպաստաւոր ընթացքը բռնէ: Այս յորդորներուն հնազանդիւլ անոր շատ կարևոր է: Հազարաւոր փորձութիւններ կը շրջապատեն զինքը, և ամէն կողմէն չար ազդեցութեանց ենթակայ է. եթէ վերջին աստիճան զգուշութիւն չընէ, իր վրայ եղած բարի տպաւորութիւններն «Առաւօտեան ամպին ու կանուխ իջած ցօղին պէս» կը ցըրուին: Ուստի աս բանիս մտադիր ըրէ զանոնք որ կը յորդորես. զգուշացուր աս մեծ վտանգէն. ջանք ըրէ զօրացնել զանոնք փորձութեանց դէմ. ազաչէ որ կործանումէ փախչելու պէս հրաժարին իրենց ջերմեռանդ և ուզիզ զգացումները խանգարող բաներէ իբր մեղանշական ճանչցուած դործքերէ, չար ընկերութիւններէ, ֆլասակար դրքերէ և զբօսանքներէ ետ կենան. և դէթ առտու և իրիկուն, և, եթէ կարելի է, աւելի յաճախ, Սուրբ Գիրք կարդալու և առանձին աղօթք ընելու որոշեալ ժամանակներ ունենան:

7. Խրատէ նաև որ մարդկային երկիւղ

կամ նկատում մէկդի թողլով, իրենց նոր զգացումները բոլոր գիրենք գիտցողներուն յայտնեն որոշ դործով մը. օրինակի աղագաւ՝ կիրակի օրեր կրօնական ժողովներու երթալով, և կամ ուրիշ որ և իցէ եղանակաւ իրենց Աստուծոյ ծառայելու որոշումը յայտնելով: Այսպէս յայտնապէս քրիստոնէական դիրք մը բռնելով անոնց միտքը աւելի հաստատութիւն կը ստանայ, և ճշմարտութեան դորութիւնը կ'աւելնայ անոնց սրտին մէջ:

8. Եթէ կը տեսնես թէ այն մարդը որ կը յորդորես՝ Սուրբ Գրոց վարդապետութիւններուն լաւ հմուտ չէ, որչափ կարելի է պարզ կերպով սորվեցուր անոր մանաւանդ այն բաները որոնք անոր անմիջական դարձին համար շատ հարկաւոր են: Զոր օրինակ՝ թէ որչափ չար են իր մեղքերը. թէ ինչպէս յանցաւոր և Աստուծոյ բարկութեանը ենթակայ է. և մանաւանդ թէ որն է փրկութեան ճամբան: Հարկ չկայ ամենեւին որ վարդապետութեան մասին կարգաւորեալ մեկնութիւններու պարապիս երկարօրէն: Ատիկա ոչ փափաքելի բան է, ոչ ալ հարկաւոր: Հազիւ կրնայ պատահիլ որ ամենակարևոր կէտերուն մէկ պարզ բացատրութենէն աւելի բան մը պէտք ըլլայ. այնպիսի կէտերու՝ զորոնք ամէն քրիստոնէայ փորձա-

ուաբար պէտք է որ դիտնայ : Վիճաբանութեան առիթներէ զգուշացիր : Յառաջ բեր Աստուածային ճշմարտութիւնները իբրև գործնական կանոններ, և ոչ թէ վերացեալ կերպով : Յուցուր թէ մեղքը Աստուծոյ դէմ ապստամբութիւն է, և անկէ դառնալը ապստամբութենէ դառնալ է. և թէ՛ ապաշխարելն ու Քրիստոսի վրայ հաւատք ունենալը Աստուծոյ դառնալ և անոր փրկական ողորմութիւնը ընդունիլ է այն եղանակաւ զոր ինք սահմանած է :

Փրկութեան ճամբուն վրայ շատ պարզ և յստակ կերպով խօսէ : Յուցուր թէ մեղանշականութիւնը ինչ բանի մէջ կը կայանայ. թէ մարդ մը մեծամեծ մեղաց կարգը դատած բաներէն, ինչպէս գողութենէ՛ մարդասպանութենէ՛ շնութենէ՛ ևն, հեռի կեցած ալ ըլլայ, տակաւին շատ կերպերով Աստուծոյ օրէնքը կտորած է, և մանաւանդ զԱստուած չփրելով անոր աս ամենէն մեծ պահանջումը կատարած չէ : Յուցուր թէ Աստուած անտարբերութեամբ չի նայիր մարդոց մեղքերուն : Բացատրէ մեղաւորի մը ինքըզինքը գործքերով արդարացնելու աշխատելուն անտեղութիւնը : Յուցուր թէ ինչպէս անարդած է զԱստուած իր մեղքերովը և անպատուութիւն բերած է անոր սուրբ և

փառաւոր անուանը, և թէ ինչպէս Աստուծոյ արդարութիւնը կը պահանջէ որ պատժուի, եթէ հնարք մը չգտնուի, որով թէ՛ աստուածային օրինաց արդարութիւնը պահպանուի, և թէ՛ ապաշխարող և հաւատացող մեղաւորին մեղքերուն ներել կարելի ըլլայ : Հասկըցուր թէ Քրիստոսի մահը այսպիսի հնարք մը եղած է . թէ անով Աստուծոյ արդարութիւնը ցուցուեցաւ անանկ յայտնի կերպով մը որ տարակուսելու տեղի չի մնար. և թէ կայ փրկագործութեան այնպիսի եղանակ մը, որով Աստուծոյ օրէնքին յարգը անեղծ կը մնայ և կ'աւելնայ ևս, հաւատացեալ մեղաւորին մեղքերն ալ իսպառ կը ջնջուին : Բացատրէ նաև որ հաւատքին ներգործութեամբը մեղաւորը այնպիսի յարաբերութիւն մը կ'ունենայ Յիսուսի Քրիստոսի հետ, որ անոր կատարած քառութեան բովանդակ արդիւնքը կը կարողանայ վայելելու, և թէ անոր բոլոր մեղքերը իրօք ջնջուելով, Աստուծոյ առջև մեղք չունեցողի մը պէս կը համարուի, և ահա այս մտքով հաւատքով արդարացած կ'ըլլայ Քրիստոս Յիսուսով : Յուցուր թէ փրկութեան միմիայն ճամբան այս է. թէ անոր երևակայած բոլոր բարի գործքերը օգուտ մը չունին իր մեղքերը քաւելու կամ անոնց համար թողութիւն առնել



տալու: Ասիկա ցուցուր ոչ այնչափ տրամաբանորէն զինքը յաղթահարելու ջանալով, այլ յաւէտ Աստուծոյ պարզ խօսքը անոր առջևը դնելով: Բոլոր ասոնք կրնաս բացատրել մարդուն դիւրիմաց և ընտել ոճով մը, այնպէս որ աղէկ հասկնայ թէ իբրև մեղաւոր Աստուծոյ դէմ ապստամբութեան մէջ մնալով անոր հետ ի՞նչ յարաբերութիւն կ'ունենայ, և թէ մեղաց քաւութեան և թողութեան համար Աստուած իր անհուն ողորմութեամբը ի՞նչ ճամբայ պատրաստած է:

9. Ճշգրիւ բացատրէ թէ աստուած պատուութեան ճամբուն մէջ մտնելու համար ինչ ընելու է: Ասիկա ամենակարևոր դիտելիք մըն է, և անանկ բան մը որ անոր նկատմամբ չատերը շատ թիւր ու մոլար ըմբռնումներ կ'ունենան: Մեր բոլոր ջանքերուն նպատակը սա պիտի ըլլայ, որ յորդորեալ մեղաւորին վրայ անմիջական ապաշխարութիւն առ Աստուած, և հաւատք ՚ի Տէր մեր Յիսուս Քրիստոս յառաջ դան: Վասնորոյ նախ և առաջ կատարելապէս բացատրէ մեղաւորին այս պարտականութեանց ինչ ըլլալը, և յորդորէ որ զանոնք անմիջապէս կատարէ: Թող քու ըրած բացատրութիւններդ պարզ ու գործնական ըլլան, և ոչ թէ վերացեալ: Բացատրութեան համար օրինակ բեր անառակ

որդւոյն առակը, և կամ ուրիշ անոր նման յարմար նմանութիւն մը, և ատենց մով հասկցուր թէ ինչ զգացումներով կը լինայ արթնցած մեղաւորին սիրտը, և ինչ փոփոխութիւն կ'ըլլայ անոր վրայ, երբ բոլորովին հրաժարելով մեղքէն՝ Աստուծոյ կը դառնայ, իր անցուցած մեղսալից կեանքին համար սրտին մէջ տրտմութիւն զգալով, և Յիսուս Քրիստոսով կը խնդրէ Աստուծոյ ողորմութիւնը: Պիտցուր անոր թէ սոսկ թշուառութենէ փախչելու և երջանիկ ըլլալու բաղձանքով մը չլիննար գործը. թէ ճշմարիտ բարեպաշտութիւնն իր մէջ կը բովանդակէ խորին զգացում մը մեղքին վատթարութեանը վրայ, իբրև ընդդէմ Աստուծոյ կամքին, և Անոր կառավարութեանը փաստակարարիք մը. կը բովանդակէ հաստատուն որոշում մը այդ չար ու վատթար բանէն յաւիտեան հրաժարելու, բարձր ու սուրբ նպատակներու համար ապրելու, Աստուծոյ հնազանդելու և զՍնիկայ պատուելու, և մարդոց ամենէն գերազանց բարին վնասելու. կը բովանդակէ նաև յստակ տեսութիւն Քրիստոսի յատկութիւններուն վրայ, շերմեւանդ սուրբ սէր անոր անձին, և կատարեալ ու սիրալիք ապաւինութիւն անոր քաւչարար փրկութեանը վրայ, իբրև միմիայն ճանա

պարհ յաւիտեանական կենաց : Չանա լաւ  
տպաւորելու ասիկա անոր մտքին մէջ, թէ  
ասոնք գիւրիմաց և իրաւացի պարտականու-  
թիւններ են, զորոնք հարկ է անյապաղ կա-  
տարել, և որոնց գործադրութեանը մէջ  
դանդադիլ՝ յամառեալ ապստամբութեան  
մէջ յարատեւել է : Եթէ կը թախանձես զանի  
աստուածային ճշմարտութեան միտ դնելու,  
սա նպատակաւ ըրէ որ հասկնայ իր պարտա-  
կանութիւնը և անմիջական հնազանդու-  
թեամբ անձնանուէր ըլլայ անոր անյապաղ  
կատարմանը : Եթէ կը յորդորես զանի շը-  
նորհաց միջոցներէն մէկուն, ինչպէս՝ կրօնա-  
կան պաշտօնի, Աստուծոյ խօսքին քարոզու-  
թեանը, Սուրբ խորհուրդներուն արարողու-  
թեանցը, ևն, ներկայ գտնուելու, թող գիտ-  
նայ թէ ատոնց վախճանը իր անձին համար  
անմիջական ապաշխարութիւն յառաջ բերել  
է, և թէ՛ այն միջոցները գործածել թէպէտ  
հարկ է սակայն անով իր պարտականու-  
թիւնը կատարած չըլլար, մինչև որ չապաշ-  
խարէ և Աստուծոյ կամքին չհնազանդի :  
Չանա որ որոշ կերպով տեսնէ և սրտանց  
զգայ թէ իր ներկայ վիճակը Աստուծոյ դէմ  
կամաւոր և դատապարտելի ապստամբու-  
թեան վիճակ մըն է . թէ՛ իր ամենէն մեծ  
և ամենէն կարևոր պարտականութիւնն է

անմիջապէս հնազանդիլ Աստուծոյ պատուի-  
րանքներուն . թէ՛ վայրկեան մը անգամ յա-  
պաղելը առանց մեղադրութեան չի կրնար  
ըլլալ, և պարապ տեղը իր անմահ հոգին  
յաւիտեանական կորստեան մօտաւրտ և յան-  
կարծահաս վտանգին ենթակայ ընել է . թէ  
Աստուած իրօք հնազանդութիւն կը պա-  
հանջէ, և իրաւունք ունի պահանջելու, և  
թէ անկարելի է որ Անոր բարկութենէն ա-  
զատի, մինչև որ ճշմարտապէս չհնազանդի :

10 . Երբ անոր խօսքերէն կը հասկնաս որ  
կուղէ գիտնալ թէ ի՞նչպէս կրնայ իր սրտին  
մէջ յառաջ բերել այն իրմէ պահանջուած  
ապաշխարութիւնն ու Քրիստոսի վրայ հա-  
ւատքը, անատեն ամենայն զգուշութեամբ  
հասկըցուր անոր որ աղօթիւք և աղաչանք  
ուղղակի Աստուծոյ դիմելու է ապաշխարու-  
թեան և հաւատոյ շնորհքը ընդունելու հա-  
մար, բայց ինքն ալ ջանալու է այդ զգա-  
ցուններն իր ներսիդին շարժելու՝ Աստուծոյ  
խօսքին ուշադրութիւն ընելով, միշտ մտա-  
ծելով և խոկալով այն բաներուն վրայ որ  
հոն դրուած են մեղքին անօրէնութեանը և  
Քրիստոսի սիրոյն վրայով : Ըսէ անոր որ կա-  
րելի չէ՝ սոսկ ուզելով մը՝ սուրբ զգացուններ  
զարթուցանել իր սրտին մէջ, քանի որ իր  
մտքին առջև չկան այնպիսի առարկաներ

որ այդպիսի զգացումներ յարուցանելու յարմարութիւնը ունին: Խրատէ որ աղէկ օւշադրութիւն ընէ միշտ գերազանց և ամենաբարձր սուրբ սիրոյ առարկաներուն, և անոնց վրայ խօսկայ, վասն զի անոնցմով միայն իր սրտին մէջ ալ այնպիսի սէր յառաջ կրնայ գալ. ուստի թող խորհի զԱստուած իբրև ներկայ՝ կենդանի՝ փառաւոր՝ սուրբ էակմը, մարդուս ամենաշերմ և ամենաբարձր սիրոյն արժանաւոր. թող խորհի նաև Քրիստոս և անոր սէրը իրեն նման կորուսեալ մեղաւորաց վրայ. և աս սրտաշարժ սիրոյ առարկաներուն մտադրութիւն ըրած ատենը մէկ կողմանէ ալ ջանալու է որոշել և ընել այն ամէն բանէրը որ Աստուծ մէ հրամայուած են իրեն: Այս տեսութիւններուն տպաւորութիւնը իր մտքին վրայ զօրացնելու համար,

11. Բացատրէ անոր Աստուծոյ սէրը: — Վստահայուր զինքը թէ որչափ մեծ մեղաւոր ալ ըլլայ, Աստուած իր անբաւ բարեօրութեամբը մեծ և գորովալից փոյթ ունի անոր վրայ. թէ՛ մեղաւորին մահը ամենևին չուզեր. թէ՛ անկեղծ և եռանդազին բաղձանօք կ'ուզէ որ մեղաւորը դարձի դայ և ապրի. և թէ՛ Աստուծոյ կարգադրութիւնները և նախախնամութիւնը փոխանակ մեղաւորին իրկութեանը ամենափոքր արդեւք

մը ըլլալու, մանաւանդ ուշղակի և մեծ ապէս նպաստաւոր են ան իրկութեան:

Եւ որպէս զի անոր մտքին մէջ աս նկատմամբ տարակոյս մը չմնայ, յիշեցուր անոր որ ամենուրեքն Աստուած երդմամբ խոստացած է բոլոր այս բաները. և որովհետև չէր կրնար իրմէ աւելի մեծագոյնի մը վրայ երդնուլ, ինք իր անձին վրայ երդում ըրած է, ըսելով. « Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Յնովան, որ ամբարշտին մեռնիլը չեմ ուզեր. հապա որ ամբարիշտը իր ճամբայէն դառնայ ու ապրի. դարձէք դարձէք ձեր չար ճամբաներէն. վասն զի ինչո՞ւ մեռնիք, ո՞վ Խորայէլի տունը»: Եզեկ. ԼԳ. 11:

12. Քրիստոսի խաչը և անոր ճաշակած դառն մահը և կրած անհուն վիշտն ու չարչարանքը դիր մեղաւորին առջևը, և ըսէ անոր որ Տէրը ասոնց ամէնը մեղաւորաց համար կրած է. ուստի և Քրիստոսի իր մահուամբը ցուցուցած անհուն սէրը յիշեցընելով զանի ապաշխարութեան յորդորէ: Շարժառիթները մարդիկ գործելու կը շարժեն. և կրնա՞յ բան մը մարդուս մտքին այնչտի վօրաւոր ազդեցութիւն մը ընել, որչափ փրկագործութեան և քաւութեան վրայ յստակ գաղափար ունենալը: Աւետարանին բոլոր փառքն ու զօրութիւնն ալ աս վարդա-

պետութեան մէջ չի՞ կայանար : Ուստի աս նիւթին վրայ խօսած ատենդ հարեանցի կամ ցուրտ կերպով մը մի խօսիր : Թող քու բոլոր հոգիդ վառեալ ըլլայ, երբ Քրիստոսի փրկարար սիրոյն վրայ կը խօսիս :

13. Մեղաւորին Սուրբ Հոգւոյն ունեցած կարօտութիւնը այնպէս բացատրէ, որ անոր պարտականութեան զգացումները ոչ թէ նուազին այլ մանաւանդ աճին : Հասկըցուր անոր որ այս կարօտութիւնը մեր պարտականութիւնները կատարելու մասին մեր ունեցած հեղգութենէն կը ծագի. ուստի և Սուրբ Հոգւոյն օգնականութեանը մեր ունեցած կարօտութիւնը մեզի անյապաղ Աստուծոյ հնազանդելու շատ զօրաւոր պատճառ մըն է, քան թէ արդելք : — Եթէ ըսէ թէ՛ Ես իմ զօրութեամբս, առանց օգնութեան, ամենեւին կարող չեմ պարտականութիւններս կատարել, ըսէ անոր որ անօգնական չէ, Հոգին Սուրբ այն վայրկենին շրջապատած է զանի անբաւ և անհուն զօրութիւն ունեցող շարժառիթներով, և թէ անոր ներսիդին կը գործէ զանի ապաշխարութեան բերելու. թէ՛ մինչ Հայր Աստուած իր նախախնամութեամբը հաճած է անոր մօքին առջև բերելու իր փրկարար ճշմարտութիւնները, Հոգին Սուրբ ալ զանոնք ազ-

դու ընելու համար կը ներգործէ, և թէ՛ այսուհետեւ եթէ անդեղ մնայ, Սուրբ Հոգւոյն դէմ դրած և զանի վշտացուցած կըլլայ, և ասով ինքզինք յաւիտենական կորստեան վտանգին մէջ կը դնէ :

14. Հարցուր թէ անոր անմիջապէս Աստուծոյ հնազանդելու արդելք եղող բանն ինչ է. և ազգու կերպով ջանա զանի համոզել որ իր հոգւոյն փրկութեանը համար այն բանէն հրաժարիլը բացարձակապէս հարկաւոր է : Ինքզինք Աստուծոյ ծառայութեանը տալու համար հարկ է որ մեղաւոր մը Անոր կամքին հակառակ եղող ամէն բան բոլորովին թողու. ուստի քանի որ Աստուծոյ կամքին հնազանդելու համար իրեն ամենէն սիրելի եղող բանէն անդամ հրաժարիլ չուզեր, անկարելի է որ Քրիստոսի հետեող մը՝ ճշմարիտ քրիստոնեայ մը ըլլայ. այնպիսին թշնամի է Աստուծոյ : Եթէ ոչ միշտ, դէթ շատ անգամ անդեղ մեղաւորը յատուկ բանի մը սաստիկ և մեղանշական յօժարութեամբ յարեալ է, և այսպիսի յարում մը, անոր անմիջապէս Աստուծոյ հնազանդելուն եթէ ոչ միմայն, դոնէ ամենէն մեծ արդելքն է : Ուստի շատ կարևոր է փնտոել և գտնել թէ ինչ է անոր այդ մեղանշական յարումը. յորդորել և ստիպել զանի որ շուտով անկէ

ետ կենայ : Ամէն մարդու մեղանչական յարուժը մի և նոյն բանի չէ . ուստի և անմիջապէս ապաշխարելու պարտականութեան դէմ եղած դժուարութիւնները տարբեր տարբեր են : Մէկուն ագահութիւնը , միւսին հպարտութիւնը , ուրիշի մը հեշտասիրութիւնը , ուղղակի հակառակ կ'ելլեն Աստուծոյ պահանջումներուն և ընդհանրապէս անզեղջ մնալուն պատճառը յիշեալ գլխաւոր մեղքերուն մէկն է : Մեղաւորը ներկայ ժամանակը յարմար չհամարիր կրօնասէր ըլլալու , վասն զի կամ գործով բոլորովին զբաղեալ է և աշխարհիս հոգերովը խեղդուած . կամ աշխարհային յաջողութիւն մը գանձելու համար բանի մը այնպէս հետամուտ է որ ուրիշ որ և իցէ բանի վրայ մտածելու ոչ ժամանակ ունի և ոչ ակտորժակ . կամ երկրաւոր հաճոյից և նորածեութեան ետեւ է . կամ անառակ ընկերներու հետ է . կամ այս կամ այն անձը նեղացընել կամ իր վրայ խնդացընել չուզեր , և կամ այս կամ այն նախապաշարունակներն ու կիրքերն ունի : Ուստի , եթէ կարելի է , խոհեմութեամբ և առանց զինքը վշտացնելու հարցուր և տես թէ ի՞նչ են անոր դարձին մասնաւոր արդելքները : Զոչուցութեամբ անոր մտադրութիւնը այն արդելք եղող մեղքերուն դարձընելը՝ ամե-

նէն ազդու միջոցն է անոր ուղիղ գաղափար տալու իր առ Աստուած և առ յաւիտենականութիւնն ունեցած յարաբերութեանցը և հոգևոր վտազներուն նկատմամբ : Անիկա ուրիշ բաներէ աւելի՝ այն մեղքերուն վրայ զգացում կրնայ ունենալ . և երբ անոնցմով Աստուծոյ դէմ ապստամբած ըլլալուն կը համոզուի , թերևս իր բովանդակ ապստամբութեանը վրայ համոզուած կ'ըլլայ . ուստի այն մեղքերէն ապաշխարել տալը՝ անոր հոգին փրկել է : Ան գլխաւոր և տիրող մեղքը՝ յաղթուելէն ետքը ալ ամէն բան կը դիւրանայ : Մարդուն հոգւոյն փրկութեանը համար սկսած գործը յաջողութեամբ յառաջ տանելու համար բաւական իմաստութիւն պէտք է , այն իմաստութենէն՝ որ 'ի վերուստ կ'իջնէ . ուստի մի մոռնար այն քաջալերական խօսքը թէ , « Եթէ մէկը իմաստութենէ պակաս ըլլայ , թող խնդրէ Աստուծմէ , և պիտի տրուի իրեն » :

15. Ազօթք ըրէ անոնց համար՝ որոնց հետ իրենց փրկութեանը նկատմամբ կը խօսիս . և , եթէ հնար է , անոնց հետ ալ ազօթք ըրէ : Աւելորդ է ըսել թէ այսպիսիներու համար ազօթք ընելու պարտական ենք . անոնց հետ ազօթք ընելն ալ նոյնչափ բացառյալ պարտականութիւն մըն է , բայց շատ

անգամ զանց կ'ընենք : Եւ սալայն պէտք է միշտ յիշել որ այս է ամենէն աղէկ միջոցը խօսուած ճշմարտութիւնը ազդու կերպով մարդոց մտքին մէջ տպաւորելու , Ստտուծոյ ներկայութեանը վրայ անոնց սրտին մէջ խորին զգացում յառաջ բերելու , և Հոգւոյն Սրբոյ օգնականութիւնը գտնելու , առանց որոյ մեր ջանքերն անպտուղ են :

16. Մէկուն հետ աղօթք ընելէդ ետքը , երբեմն շատ օգտակար է զանի հրաւիրել որ ինք ալ քու ներկայութեանդ իրեն համար աղօթք ընէ : Սյուպէս ընելով առիթ կու տաս անոր որ յայտնէ այն զգացումները զորոնք կը բաղձաս անոր սրտին մէջ զարթուցանել : Տարակոյս չկայ թէ ոմանք այդպիսի առաջարկութիւն մը կատարելու պիտի դժկամակին . բայց և այնպէս ջանալու է այն դժկամակութիւնը վերջնել՝ խօհեմութեամբ թախանձելով : Արդարև յայտնի է որ այնպիսի պարագաներու մէջ աղօթքի խօսքեր միայն ըսելէն օգուտ մը յառաջ չի դար : Բայց որովհետև այնպիսի անձ մը պարտական է իսկ և իսկ իր սիրտը Ստտուծոյ տալ , և ընդունելի կերպով աղօթք ընել , հաւանական է թէ քու առաջարկութենէդ և թախանձելէդ յորդորուի այսպէս ընելու :

17. Անկէ բացմուած ատենդ , յարմար

կրօնական տետրակ մը կամ հոգևոր գիրք մը տուր անոր , որ առանձին կարդայ : Անզեղջ մարդոց հետ կրօնական խօսակցութեանց մտնելը իրենց գործ ընող քրիստոնեաներն՝ իրենց քով ունենալու են կրօնական ընտիր տետրակներ , որոնց ընթերցումը շատ օգուտ կընայ ընծայել թէ՛ անտարբեր անզեղջ մեղաւորին և թէ՛ փրկութիւն փնտռողին :

18. Յարատևէ քու ջանքերուդ ու աշխատութիւններուդ մէջ : Երբ մէկը իր հոգևոր վիճակին նկատմամբ արթնցուցած էս , զանի շատ վտանգաւոր վիճակի մէջ դրած կ'ըլլաս . թերևս անոր յաւիտենական բախտը իր յառաջ երթալէն կամ նորէն անհոգութեան մէջ իյնալէն կախում ունենայ . ուստի եթէ քու զանցառութեամբդ կամ անոր համար աշխատելու յարատևութիւն չընելովդ անիկա կորսուի , քու բոլոր ջանքերդ , թէև բարեմտութեամբ սկսուած են , անոր դատապարտութիւնը աւելցընելու միայն կը ծառայեն :

Գ. ԶԳՈՒՅՈՒԹԻՒՆԸ

Անզեղջ մարդոց դարձի դալուն և կորսուածներուն փրկութեան հասնելուն համար աշխատելու այս պարտականութիւնը , ինչպէս տեսնուեցաւ , մեծ կարևորութիւն ունի , զա-

նիկա կատարելու միջոցներն ալ շատ յայտնի են. բայց և այնպէս մարդկային անկատարութեան և տգիտութեան պատճառաւ, կրնայ ըլլալ որ անխոհեմութեամբ և անյարմար կերպով կատարուի, կամ նաև անանկ կերպով մը, որ մեղաւորին հոգւոյն փրկութեանը ծառայելու տեղ, անոր կործանման պատճառ ըլլայ: Երբ այսպէս կը կատարուի, չենք կրնար յուսալ թէ Աստուած միջամբտութիւն ընելով մեր անհոգութեան և անզգուշութեան բնական հետեւանքները կ'արգիլէ: Ինչպէս որ բժիշկները մարմնոյ օրէնքները քննելու և սորվելու պարտական են, նոյնպէս հոգւոց բժշկութեանը համար աշխատողները պարտական են մտքին օրէնքները գիտնալու. և եթէ պախարակելի են այն կեղծ բժիշկները, որ տգիտութեամբ կը մեռցընեն իրենց խնամօցը յանձնուած հիւանդները, ո՞րչափ ևս առաւել պախարակելի և դատապարտելի են անոնք որ անմահ հոգիները փոխանակ բժշկելու, տգիտութեամբ կը փրասեն անոնց:

1. Զգուշութիւն ըրէ որ անզեղջ մեղաւորին սրտին մէջ ինքզինք արդար համարելու հակամիտութիւն մը չսնուցանես: Մարդս յետին աստիճան վատթարացեալ է մեղօք, բայց և այնպէս ինք իրեն հաւնած է և ինք-

զինք արդար կը համարի. և ամէն բանէ աւելի ընդդիմութիւն և դժկամակութիւն ունի Աստուծոյ առջև ինքզինք խոնարհեցնելու, և իր նուաստութիւնը ճանչնալով ինքզինք անարդար համարելու: Աս յատկութիւնը յետին աստիճան չարագործ մարդոց վրայ ալ կը տեսնուի, և սակայն չկայ հակամիտութիւն մը որ ասոր չափ կործանիչ ըլլայ մարդուս հոգւոյն: Ասիկա յայտնի է, քանզի դարձի եկող մեղաւորին բուն ընելու բանը իր յանցաւորութիւնը և յետին աստիճան անարժանութիւնը զգալ ու խոստովանիլ է, և Աստուծոյ ողորմութիւնը խնդրել իբրև ճրի շնորհք մը: Անհնար է որ ինքզինք արդար համարող մը ասիկա ընէ: Ուստի մեղաւորին իրեն ընելու բաները ցուցուցած ատենդ, զանի խնամով զգուշացուր որ չկարծէ թէ որ և իցէ գործ մը ընելով կրնայ իր փրկութեանը համար արժանաւոր բան մը ըրած ըլլալ: Ըսէ անոր թէ արդէն դատապարտութեան տակ է իր մեղքերուն համար. թէ յետին աստիճան յանցաւոր, վատթար և ապականեալ մեղաւոր մըն է Աստուծոյ առջև, և կրնայ փրկուիլ միայն Աստուծոյ ողորմութեամբը, որուն բնաւ արժանաւորութիւն չունի: Իմացուր թէ պէտք է որ ստուգիւ իր այս վիճակին մէջ դռնուիլը ճանչնայ

և ազգու կերպով զգայ, և աշխարհիս մէջ որ և իցէ մէկուն կամ բանի մը ապաւինելէն զգուշանալով, Աստուծոյ միայն նայի. մեղաց թողութիւն ընդունելու համար, և ողբով ու բարեպաշտ տրամուխեամբ Անոր ոտքը իշնայ աղաղակելով, « Աստուած՝ ողորմէ՛ ինձի մեղաւորիս » :

2. Ամէն կերպով զգուշացիր. որ հետերնին խօսած անձինքներուդ մտքին վրայ ասանկ տպաւորութիւն մը չընես, թէ դարձի գալու և կրօնասէր ըլլալու գործը երկայն աշխատութիւններով շատ ժամանակ անցընելու գործ մըն է : Թող գիտնան անոնք որ Աստուածապաշտութիւնը բանաւոր և կամաւոր գործողութիւն մըն է մտաց, որով մարդուս հոգին Աստուծոյ դէմ ունեցած ապստամբութենէն կը դադրի, Անոր իշխանութեանը կը հպատակի և անոր ողորմութիւնը կ'ընդունի : Ըսէ անոնց թէ աս գործը կատարելու համար շատ ժամանակ և երկայն աշխատութիւն պէտք չէ. թէ այս քու բրած տեսութեանդ ատենն անգամ և նոյն տեղը կընայ անմիջապէս կատարուիլ. և եթէ այն տեղէն մեկնին առանց աս գործը կատարելու, ապստամբական ոգւով մը գացած պիտի ըլլան, և կընան ատանկով իրենց անձին վրայ արագ և յանկարծական կործանում բերել :

3. Քու բոլոր խրատներուդ և աղօթքներուդ մէջ զգուշացիր մանաւանդ յայտնի կամ լռելեայն այնպիսի բացատրութիւններ գործածելէ, որոնք անզեղջ մեղաւորաց բուն վիճակին վրայ սխալ գաղափար կու տան : Յիշէ միշտ որ անոնք ազատաբար գործող էակներ են, միշտ հակառակ կը կենան Հոգւոյն Սրբոյ յամսուութեամբ և թէ անոնց սըրտին նեղութիւնը, մտքին խռովութիւնը և ուրիշ կերպ դժուարութիւնները աս պատճառէն յառաջ կու գան : Եթէ այս է անոնց բուն վիճակը, յայտնի է որ, եթէ ասկէ տարբեր գաղափարներ տաս, ապաշխարելու շարժառիթներուն զորութիւնը կը կտրես, և մեղաւորին դարձի գալուն արգելք կ'ըլլաս : Հակառակ կեցած կ'ըլլաս Հոգւոյն Սրբոյ ընելու տպաւորութեանցը, և ատանկով հոգիներ կործանելու պատճառ կընաս ըլլալ : Եթէ մեղաւորին փրկութեանը կը փափաքիս, չըլլայ որ խրատես զանի ուրիշ ժամանակի սպասելու. անոր փրկութեանը համար Աստուծոյ որոշած ժամանակն հիմա է : Մի ըսեր անոր, և կամ հետը աղօթք բրած ատենդ անանկ գաղափար մի տար, թէ ինք անկարող է ապաշխարելու : Այսպէս ընելով սխալ գաղափար կու տաս անոր իր վիճակին վրայ : Անոր պէտք եղած բանը ոչ թէ իր փրկութեանն է :



այլ կօտորին ունենալն է : Արդարև մեզաւորին Աստուծոյ դառնալը դժուարին բան մըն է . բայց խնդիրը սա է թէ այս դժուարութիւնը ուստի՞ կը ծագի : Ամէն մարդ գիտէ որ բան մը ընելու հարկ ու բան մը ընելու հարկ ըլլալուն մէջտեղ տարբերութիւն մը կայ , և այս տարբերութիւնն իրական է . այս երկու բաները , կրնալն ու կամենալը , որոշել կարևոր է . բարի բան մը ընել չկրնալը . դժբախտութիւն մըն է , չկամենալը՝ մեղք : Մեզաւորին դարձի գալուն արդեւք եղող դժուարութիւնը՝ անոր ապաշխարելու կամք չունենալն է :

4 . Յորդորէ մեզաւորը որ իր պարտականութիւններն անմիջապէս կատարելու պարագի մանաւանդ՝ քան թէ իր սեպտեմբերն իր սեպտեմբերն զորոք ըլլալուն հարմար յոյս փորձելու , և իրինքեան խաղաղութիւնը վայելել ջանալու : Հաստատուն հիման վրայ կայացեալ յոյսը՝ մարդուս սրտին մէջ սուրբ զգացումներ , և վարքին մէջ բարի պտուղներ գտնուելէն յառաջ կու գայ : Աւստի եթէ դարձի գալու մեզաւորը փոխանակ սուրբ զգացումներ ունենալ ջանալու , միայն այնպիսի յոյս մը գտնելու ետեւ ըլլայ , կը սխալի . այս կերպով փնտռած յոյսը չի կրնար ձեռք բերել : Ընդհակառակն , եթէ այն զգացումներն իրօք

անոր սրտին մէջ կան , փնտռած յոյսը բնականապէս կը ծնանի անոր սրտին մէջ :

5 . Ձեռնամուխ եղիր այս դործին , յաջողութեան համար պարզապէս Աստուծոյ Հոգւոյն օգնութեանը ապահինելով : Արդարև պէտք է մեզաւորին յիշեցնել զանի դարձի բերելու յարմար ճշմարտութիւնները , և այնպիսի կերպով պէտք է յիշեցնել որ բազմացեալ արդիւնքը ձեռք բերուի . եթէ ասանկ չընես , 'ի գործ դրած չես ըլլար այն միջոցները զորոնք Հոգին Սուրբ կը դործածէ մեզաւորը դարձի բերելու համար : Եւ սակայն միայն ճշմարտութեան մի ապահինիր , որպէս թէ առանց Աստուծոյն ազդեցութեան կարելի է անով անդեղը դարձի բերել . ճշմարտութիւնը ներկայացուցած ատենդ քու բանեցուցած խոհական կերպերուդ և ճարտարութեանդ ալ մի ապահինիր : Այդ կերպ ապահինութիւնը բոլորովին անհիմն և ընդունայն է , և անյաջողութեան կը տանի : Եւ ատոր արդիւնքն ալ կ'ըլլայ լքումն սրտի և վհատութիւն նկատմամբ ամենայն ապառնի աշխատութեանց : Ասոր հակառակ , եթէ կատարեալ ապահինութիւն ըլլայ առ Աստուծոյ , ատիկա ոչ միայն մարդուս հոգւոյն քաջալերութիւն և մեծ զօրութիւն կը պարգևէ , այլ նաև Անոր օգնու-

Թիւնը կը գրաւէ մեր ջանքերուն վրայ, և մեր աշխատութիւնը յաջողութեամբ կը պսակուի, և ասանկով նոր քաջալերութիւն կ'ընդունինք ուրիշներուն համար կրկին ջանքեր ընելու: Կատարեալ կերպով Աստուծոյ ապաւինելուն արդիւնքները քաջալերական են: Քրիստոնեայ մը որ բոլորովին Աստուծոյ ապաւինելով մեղաւորաց դարձին համար աշխատելու կ'ելլէ, որպէս թէ չափով մը ամենակարողութիւն կը ստանայ, և կրնայ ըսել թէ Քրիստոս Յիսուսի զօրութեամբը կարող եմ ամէն բան ընելու:

6. Զգուշացիր որ այն անձին վրայ որուն հետ կը խօսիս՝ անխոհեմ կերպով բնական սէր և համակրութիւն յայտնելով՝ անոր դարձի դալուն արգելք չըլլաս: Ծնողական, որդեական և կամ ուրիշ բնական սէր յայտնել՝ գործոյն յառաջադիմութեանը կրնայ ծառայել, եթէ այն սէրը զօրաւոր գրգիռ մը ըլլայ պարտականութիւնը ըստ արժանւոյն և եռանդով կատարելու, և արգելք չըլլայ մեզի Աստուծոյ պահանջմունքները իրենց բոլոր զօրութեամբը նկարագրելու մեր սիրելիներուն, և անոնց իրենց յանցաւոր, մեղսալից ու կորուսեալ վիճակին վրայ կատարեալ դազափար մը տալու: Իսկ եթէ անխոհեմ սիրով ետ քաշուինք Աստուծա-

յին պահանջմունքներն իրենց բովանդակ զօրութեամբը անոնց ներկայացընելէ, անպէտ ցաւակցութեամբ զգուշանալով որ դանոնք տառապալից խորհուրդներու մէջ չընկըղմենք. եթէ կատարելապէս Աստուծոյ կողմը չբռնենք անզեղ ջին դէմ, և անմիջական հնազանդութեան չստիպենք զանկա, իրօք Աստուծոյ հակառակ կողմը բռնած կ'ըլլանք, և անոր պահանջմունքներուն մեղաւորին հոգւոյն վրայ ընելու ազդեցութիւնը 'ի դերե կը հանենք: Աստուծոյ սէրը աւելի զօրաւոր ըլլալու է մեր սրտին մէջ քան թէ ծնողական և կամ ուրիշ տեսակ սէր մը. և Աստուծոյ ու անոր թագաւորութեանը կատարեալ հաւատարմութիւն պէտք ենք ցուցընել, թէ և ասկա ցաւ պատճառէ մեզի կամ մեր բարեկամներուն:

Միտքդ բեր որ քու սիրելիներուդ փրկուութեանը համար աշխատած ատենդ՝ անանկ բանի մը համար կը յողմես, որուն Աստուած և երկնից հրեշտակներն ու սուրբերը քեզի չափ և քեզմէ աւելի փոյթ և իղձ ունին: Արեւապէս, ընել փափաքածդ, քու սիրելեացդ մէկուն փրկութենէն աւելի՝ Փրկչին պատիւն ու փառքը և տիեզերաց երջանկութիւնը ու խնդութիւնը աւելցնելն է: Սա ալ թող մտքէդ չելլէ, որ աս ընթացքը

բռնելու կը պարտաւորէ զքեզ, ոչ միայն Աստուծոյ սէրը, այլ և այն դուժը զոր ունիս քու բարեկամներուդ հոգւոյն փրկութեանը համար. վասն զի եթէ տարբեր ընթացք մը բռնելու ըլլաս, ուղղակի անոնց կործանմանը համար աշխատած կ'ըլլաս:

7. Չանազան և չափազանց երկար խօսակցութիւններով ունկնդրիդ միտքը մի շիտթեր և մի ճապաղեր: Խօսակցելուն նըպատակն է մարդուն խղճմտանքը շարժել, և համոզել զանի որ իրեն ներկայացուած ճշմարտութիւններուն համաձայն շերմեւումնդ ջանքեր ընէ: Պարտականութեան մեծամեծ կէտէրը պարզ ու յստակ են, և պէտք է որ կենդանի նկարագրութեամբ դրուին անոր աչքին առջև, և ազդու կերպով յորդորուի զանոնք անյապաղ կատարելու, և անատեն պէտք է մեղաւորը ինք իր գլխուն թողուլ որ իր լսածներուն վերայ մտածէ կատարելագէս՝ սա համոզումն ունենալով թէ իր անմիջական պարտքն է Աստուծոյ հնազանդիլ: Եթէ զանազան նիւթերու վերաբերեալ շատ մը ճշմարտութիւններ մէկէն 'ի մէկ անոր միտքը խօթելու աշխատիս, և կամ եթէ խօսածներդ ճապաղ ըլլան, իրենց ուժը կը կորսնցունեն, և դարձի դալու գործը կը խափանի: Նոյն արդիւնքը

յառաջ կու գայ, եթէ շատ մը անձինք մի և նոյն անհատին հետ իրարու ետևէ խօսին. մանաւանդ եթէ ճշմարտութիւնը ներկայացընելու և իր պարտականութիւնը ցուցընելու մասին, ինչպէս որ գրեթէ միշտ անանկ կ'ըլլայ, տարբեր տարբեր ոճեր բռնելով մարդուն միտքը շիտթեն և ճապաղեն: Երբ մէկուն հետ խօսակցութեան գործը անգամ մը ըստ արժանւոյն կատարուի, խիստ բաղձալի է որ անիկա ատեն մը ինքնիրէն թողուի, վասն զի աստուած ային ողորմութեան գործը ամենէն արագ յառաջ կ'երթայ անոր սրտին մէջ, երբ անիկա ամէն ազդեցութենէ կըտրուած և զատուած ըլլայ բաց յԱստուծոյ. և երբ անոր միտքը, իբրև Աստուծոյ ներկայութեանը, անշարժ կերպով հաստատուած ըլլայ իր պարտաւորութեանցը վրայ: Սակայն սխալմունքէ մը փախած ատենդ ուրիշ նոյնչափ վնասակար սխալմունքի մը մէջ մ'իյնար: Չափէն աւելի երկար ատեն այն անձինքով չհանդիպելով՝ արդէն անոր մտացը վրայ եղած տպաւորութիւնները կրկին նորոգելու չաշխատելն ալ սխալմունք մըն է: Երբ բաւական ժամանակ անցած է, այնպէս որ ըսուած խօսքերը կրնան անոր վրայ կատարեալ ազդեցութիւն բրած ըլլալ, նորէն տեսնուէ անոր հետ, և եթէ արդէն ըսածներդ ազդե-

ցութիւն ըրած չեն շնորհօքն Աստուծոյ ապաշխարութիւն յառաջ բերելու, անատեն նորէն և աւելի ևս ջանա ներկայացնել անոր Աստուծոյ պահանջումներն ու իր պարտականութիւնը:

8. Երբ անզեղջին զօրաւոր յորդորանք կ'ընես որ անմիջապէս ապաշխարէ և Աստուծոյ դառնայ, չըլլայ որ երբէք խօսակցութիւնդ այնպէս աւարտես, որ անոր մտքին վրայ եղած խորին և ազդու տպաւորութիւնը, եթէ կայ, ցրուի կամ նուազի: Այսպէս կ'ըլլայ, եթէ խօսքը սկսի պտտիլ ընդհանուր նիւթերու վրայ, թէև ասոնք կրօնական ըլնան. իսկ եթէ աշխարհային բաներու դառնայ խօսակցութիւնը, ալ աւելի գէշ կ'ըլլայ: Այսպիսի ընթացք մը բռնելէն բոլորովին դդուշացիր, և նայէ որ այն անձինք որոնց հետ տեսութիւն կ'ընես՝ միշտ Աստուծոյ պատուիրանքներուն և անմիջական հնազանդութեան շարժառիթներուն լիակատար ազդեցութեանը տակը թողուս:



**Ե. ԸՅՍ ՊԵՐՏԵՆՆՈՒԹԻՒՆԸ ԿԵՏԵՐԵԼՈՒՆ ԿԵՐՊԸ**

Այս կարևոր և ամենօդտակար գործոյն յաջողութեանը համար՝ ոչ միայն անզեղջին

հոգին դարձնի բերելու յարմարութիւն ունեցող ճշմարտութիւններ ներկայացնել պէտք է, այլ և կարևոր է որ ներկայացուցեալ ճշմարտութիւնները այնպիսի եղանակաւ մը յառաջ բերուին որ բաղձացեալ վախճանին ձեռք բերուելուն արդելք մը չըլլայ: Որչափ յաճախ կը պատահի որ ճշմարտութեան բովանդակ ոյժը կ'ոչնչանայ զանիկա ներկայացընելու եղանակին մէջ անտեղութեան կամ անյարմարութեան պատճառաւ: Որպէս զի այսպիսի ցաւալի բան մը չպատահի, աղէկ միտ դիր հետեւեալ խրատներուն:

1. Մէկուն հետ՝ անոր հոգևոր վիճակին նկատմամբ՝ չըլլայ որ աճապարանօք և ցուրտ կերպով խօսիս: Այսպէս ընելով բոլոր ըսածներուդ հակառակ դործած կ'ըլլաս, դիմացինդ ալ այնպէս կը զգայ: Քանզի ասկէ կը հետևի թէ ըսածներուդ դուն ալ չես հաւատար: Ինտո՞ր կրնայ ըլլալ որ մարդ մը իր մէկ սիրելի բարեկամը կամ որ և իցէ մէկը յաւիտենական կորստեան վտանգին մէջ հաւատարով, անոր դատապարտութենէ վախչելու և Քրիստոսի գիրկը դիմելու անկեղծ յորդորներ ընէ առանց սրտառուչ կերպ մը և խորին զգացմունք յայտնելու: Իսկ եթէ հարևանցի և աճապարանօք, կամ առանց զգացման իբր սոսկ պարտականութիւն մը

կատարելու, և խղճմտանքիդ խաթերէն ազատելու համար խօսելու ըլլաւ անմահ հոգւոյ մը փրկութեանը նկատմամբ, դիմացինիդ բոլոր զգացումները պաղեցնել և եղած ջանքերը պարագահանել ուրիշ ինչ աղբիւնք կրնաս յուսալ:

2. Տխուր և դաժան դէմք ալ մի ցուցուներ: Աստուած պաշտութիւնը բանաւոր և բերկրալի ծառայութիւն մըն է Աստուծոյ, և կրնայ մարդ Աստուծոյ մըն ծառայել, անոր կառավարութեամբ բերկրել, թէպէտ խորունկ ցաւ կը զգայ մեղաւորաց հոգեւոր վիճակին համար: Երբ քրիստոնեայ մը այսպէս Աստուծոյ ուրախ է, ամէն յարմար առթիւ մէջ անդորրութիւն և զուարթութիւն կը յայտնէ, և սաստիկ զգացումներ ունեցած ատեն ալ չի չիտթիր: Եթէ աս եղանակաւ վարուիս, անգեղ մեղաւորը սա համոզումը կը ստանայ թէ, դուն առ Աստուած ունեցած սիրովդ կատարելապէս երջանիկ ես, և թէ տրտմութիւնդ յառաջ կու գայ մեղաւորին վրայ ունեցած անկեղծ և խորին կարեկցութենէդ, և այն ցաւայի համոզումէն թէ, եթէ մեղաւորը չապաշխարէ, յաւիտեան պիտի կորսուի: Քան մը չկայ որ ասկէ աւելի զօրեղ կերպով համոզէ մեղաւորը թէ բարեպաշտութիւնը որչափ բաղձալի է, և շարժէ զանի եռանդուն

ջանքեր ընելու որ ինք ալ նոյն զգացմանց տէր ըլլայ: Ընդհակառակն, եթէ խիստ տխուր և դաժան կերպ մը ցցունես, դիմացինիդ սրտին մէջ գործիք դէմ մեծ հակակրութիւն մը կը ծագեցնես, և կը կարծեցնես անոր թէ աստուածապաշտ ըլլալը աշխարհի մէջ ամէն հաճութենէ կտրուել և խոր տրտմութեան մէջ ընկղմած ապրիլ է:

3. Խիստ և հրամայական կամ իշխանական կերպեր գործածելէ ալ ետ կեցիր: Արնայ ըլլալ որ այնպէս խօսինք՝ որպէս թէ մեղաւորը մեղի դէմ յանցաւոր է քան թէ Աստուծոյ այսպէս ընելով անանկ տպաւորութիւն մը կ'ընենք ունկնդրին մտքին մէջ: որպէս թէ մեր իշխանութեան զօրութեամբ կը ստիպենք զինքը ապաշխարութեան: Սակայն ճշմարիտը սա է որ ինք ոչ թէ մեղի այլ Աստուծոյ դէմ մեղք գործած է, և թէ մենք ալ ներսն քրոջ և Աստուծոյ ներսն հարսն զրոյն: Եւլլալ, կաշխատինք որ ինք ալ Աստուծոյ մերձենայ և անոր հետ հաշտուի: Ուստի քու վարմունքդ թող համարձակ եռանդնոտ և որոշ ու անդրդուելի ըլլայ: Թախանձախց սահմամբ յառաջ բեր Աստուծոյ բոլոր պահանջմունքները. բայց այնպիսի քաղցրութեամբ, բարեսրտութեամբ, հեղութեամբ և կարեկցութեամբ, որ մեղաւ

ւորին միտքը կատարելագէտ համոզուի թէ Ս.ստուծոյ գործն է քու ջատագովածդ ոչ թէ քուկինդ :

4. Զգուշացիր կրօնքին կարևորութեանը վրայ այնպիսի ընդհանուր և տարտամ խօսքեր ընելէ, որոնք սրոշ արդիւնք մը յառաջ բերելու չեն ծառայեր : Եթէ պիտի խօսիս մէկու մը հետ, խօսքդ ուղղակի անոր վիճակին վերաբերելով ըրէ : Ընդհանուր ծանօթութիւններ տուած ատենդ, շատ բաներու մէջ քեզի հետ կը համաձայնի անզեղ մեղաւորը . և եթէ աւելի բան մը չխօսիս, և զինքը որոշ կէտի մը չբերես, կրնայ ըլլալ որ ինքնահաւանութեան զգացում ալ յառաջ դայ անոր սրտին մէջ, որպէս թէ շատ մը կարևոր բաներու մէջ բաւական յառաջադիմութիւն ըրած է դէպ յաստուած պաշտութիւն : Մի թողուր անոր մտքին մէջ այսպիսի տպաւորութիւն մը : Հարեանցի կերպով գործ մի տեսներ : Ըշմարտութիւնը անանկ յստակ և որոշ կերպով մը ներակայացուր անոր, որ իր կործանեալ վիճակը և ապականեալ բարքը տեսնէ . և հրաւիրէ զանի անմիջապէս ապաշխարելու և Ս.ստուծոյ հնազանդելու :

5. Խօսակցութիւններուդ մէջ հանդարտ և երկայնամիտ եղիր, որ չըլլայ թէ խիստ և կսկծելի պատասխան մը ընդունած ատենդ :

այլայլիս : Հեղութիւնը անյաղթելի է . բայց եթէ ինքզինքդ չբռնես, ու կիրք ելլես, բոլոր ազդեցութիւնդ կը կորսնցնես : Զգուշացիր նոյնպէս որ ընդունայն և անպիտան վիճաբանութիւններով նպատակէդ չխոտորիս : Մտարակոյս պէտք է մեղաւորին մտքէն փարատել թէ՛ վարդապետութեան և թէ պարտուց վերաբերեալ անոր բոլոր իրապէս ունեցած դժուարութիւնները : Սակայն դիւրին է իրարմէ որոշել հրահանգութիւն ընդունելու անկեղծ բաղձանքն՝ ու տարակուսական վիճաբանութիւններու դիմելով պարտականութեան ստիպումէն փախչելու ջանքը : Զգոյշ եղիր որ այդպիսի ջանքեր չխոտորեն քեզ նպատակէդ : Երբ տարակուսական վիճաբանութեան նիւթ մը յառաջ բերուի, որմէ յայտնի կ'երևնայ որ բարի արդիւնք մը յառաջ պիտի չգայ, ետ կեցիր անկէ, և ունկնդրիդ մտադրութիւնը պարզ ու գործնական պարտականութեան մը դարձուր, ինչպէս են՝ ապաշխարութիւնը, հաւատքը, ընտանեկան աղօթքը, ևն, որոնց վրայ վէճ չկրնար ըլլալ :

6. Ազէկ սորվէ անոնց բարքը որոնց հետ կը խօսակցիս, և ըստ այնմ յարմարցուր խօսքերդ : Չանա նաև անոնց քով երթալ յարմար ատեններ և նպաստաւոր պարագաներ :

բու մէջ : Այս կերպով խօսքերդ բոլոր իրենց զօրութիւնը կրնան ազդել ունկնդիրներուդ : Ընդհակառակն եթէ առանց խոհեմութեան վարուիս, կրնայ ըլլալ որ ըսածներուդ բոլոր ոյժը կորսուի, նաև գէշ արդիւնք մը յառաջ գայ : Սակայն նայէ որ երկչոտութիւնը խոհեմութեան տեղ չառնես սխալմամբ. և չըլլայ որ՝ Վնաս մը չընեմ ըսելով, բարիք գործելու բոլոր պատեհութիւնները զանց ընելու մեղքին մէջ իյնաս : Եթէ անկեղծաբար փափաքիս հոգիներու փրկութեանը, և իմաստութիւն խնդրես Աստուծոյ շերմեռանդ աղօթիւք, խոհական ու սրտաշարժ խօսակցութեան պատուական առիթներ առատօրէն կ'ելեն դէմդ աստուածային նախախնամութեամբ, և Սուրբ Հոգիէն օգնութիւն կ'ընդունիս՝ զանոնք ուղիղ կ'իրպով և խոհեմութեամբ գործածելու :

7. Թող բոլոր ջանքերուդ մէջ յայտնապէս տեսնուի, որ փնտռած բանդ ոչ թէ ուրիշները սոսկ քու կրօնական կարծիքնի բողբերել և կամ զանոնք քու հետեւած քրիստոնէական յարանուանութեանդ յարելու համոզել է, այլ ատկէ շատ աւելի գերազանց և կարևոր բան մըն է. այն է՝ համոզել զմարդիկ Աստուծոյ պատուիրանքներուն ուշադիր ըլլալու և զանոնք կատարելու. զի զ՛ի գա-

լու և ապաշխարելու, և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի հաւատալու, և այսպէս յաւիտենական մահուանէ ազատելու .

8. Թող բոլոր կենցաղավարութիւնդ այնպէս ըլլայ, որ ըրած յորդորանքներուդ զօրութիւն տայ : Հին և ճշմարիտ առած է թէ Խօսքերու ձայնէն աւելի բարձր է գործքերու ձայնը : Մէկուն մտքին բուն վիճակը իր կենցաղավարութեանը սովորական եղանակէն կը ճանչցուի : Եթէ աստուածասէր, շերմեռանդ և աղօթասէր է, ասիկա պիտի տեսնուի և ճանչցուի : Եթէ մարդոց փրկութեանը անկեղծաբար և սիրով կը փափաքի, ամէն մարդ պիտի տեսնէ և իմանայ ասիկա : Երբ Մովսէս Սինայ լեռնէն վար իջաւ, դէմքը կը փայլէր, և հասկցուեցաւ թէ ամենակալ Աստուծոյ քով գացած և կեցած էր : Նոյնպէս և դուն եթէ շատ մտածես յաւիտենականութեան և անմահ հօգևոց արժէքին վրայ, և եռանդով փափաքիս մարդոց փրկութեանը, մտքիդ այդ վիճակը շատ կերպերով կը ճանչցուի նայուածքէդ, շարժուածքէդ, խօսքերէդ և բոլոր կենցաղավարութեանէդ : Վերջապէս քու բարեպաշտ վարքըդ շատ զօրաւոր ապայոյց է անդղջ մեղաւորը ըսածներուդ ճշմարտութեանը համոզելու : Ընդհակառակն, բան մը չկայ որ

յաւիտենականութեան հետ ունեցած յարաբերութիւնը զգալու նոր սկսող մեղաւորին սիրտը չարաչար պաղեցնէ ինչպէս թեթև, աշխարհասէր կամամբարիշտ վարմունք տեսնել այն անձանց վրայ՝ որոնք ուրիշ ատեններ մեծ եռանդով և գովթով յորդորանքները բաժ են իրեն՝ թախանձելով որ գալու բարկութենէն իրաչի: Քանի մը թեթև և սնտոի խօսքեր, կամ անզգոյշ գործքեր բաւական կրնան ըլլալ շատ հոգիներ յաւիտեան կործանելու: Թող քրիստոնեաներն աղէկ գիտնան ասիկա և զգուշութիւն ընեն: Շատերուն աչքը անոնց վրայ է. անոնց գործքերը, խօսքերը և նայուածքներն անգամ շատերէն կը դիտուին. անոնք տեսարան մը եղած են հրեշտակաց և մարդոց, և անոնց վարքը ազդեցութիւն պիտի ունենայ ոչ միայն այս աշխարհիս, այլև յաւիտենականութեան մէջ: Թող ուրեմն բարեպաշտ անձինք ամէն օր մտածեն այն ժամուն վրայ որուն մէջ երկինքը կրակով այրուած պիտի լուծուի և տարերքները բռնկած պիտի հալին, և թէ՛ իրենք և թէ՛ բոլոր մարդիկ Աստուծոյ ատեանը պիտի կայնին իրենց վերջին վճիռը ընդունելու յաւիտենական երանութեան կամ թշուառութեան: Թող այս բաներուն վրայ խորհին մինչև որ խորին կերպով զգան անոնց իրական ըլլալը, և

անատեն թող պատասխան տան Առաքելոյն հարցմանը, թէ՛ «Ձեզի ինչպէս մարդիկ ըլլալ կը վայելէ սուրբ վարմունքով ու բարեպաշտութեամբ»: Անոնց այս հարցման տալու պատասխանը յայտնի է. ուստի թող այն պատասխանին համեմատ վարուին:

Չ. ՎԵՐՋԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Այս պարտականութիւնը հաւատարմութեամբ կատարելը ո՛րչափ օգտակար կ'ըլլայ, և ո՛րչափ բարի ազդեցութիւն կ'ունենայ քրիստոնէից անձնական աստուածաշատութեանը: Ասով ամէն սուրբ և բարձր զգացումներ միշտ ՚ի գործ կը դրուին: Ասով ճշմարտութիւնը իր զօրաւոր ազդեցութեամբ միշտ մարդուս մտքին առջև կը կենայ, և անոր սրտին մէջ հզօր շարժառիթներ կ'ընծայէ միշտ սուրբ վարք ունենալու: Ասով քրիստոնէից երջանկութիւնը կ'աւելնայ: Քրիստոնեայք շատ քիչ կրօնական երջանկութիւն կը վայելեն, վասն զի ուրիշներուն իբրկութեանը համար շատ քիչ գործ կը տեսնեն, և այսպէս ՚ի հարկէ ազօթք ընելու և սուրբ զգացումներ ունենալու քիչ առիթներ կ'ունենան: Թող առատանան այս սիրոյ գործոյն մէջ, և անատեն անոնց սրտերն ա-



ղօթիւք և իրաւաբանութեամբ պիտի բերկրին, և ասիկա նոր վկայութիւն մը պիտի ըլլայ թէ Աստուծոյ ուզածին պէս մարդիկ են: Ամենուն ծանօթ իրողութիւն մըն է թէ, ուրիշներուն բարեացը համար ամենէն շատ աշխատողները, ամենէն աւելի օրհնութիւն ընդունած են Աստուծմէ: Աստուած շատոնց հրատարակած է թէ, « Առատածեռն հոգին պիտի գիրնայ, և ան որ կ'ուռդէ ինքն ալ պիտի ուռդուի »:

2. Եթէ ամենայն քրիստոնեայք հաւատարմաբար կատարեն այս պարտականութիւնը, արդիւնքը ո՛րչափ մեծ պիտի ըլլայ աշխարհիս վրայ: Ետ ըան կրնայ ըլլալ և եղած է այս գործին անձնանուէր եղող մէկ անհատի ձեռքով: Եթէ բոլոր քրիստոնեայք զիրենք տան աս գործին, և այսպէս աստուած պաշտութեան արդիւնքը ցուցնեն իրենց կենցաղավարութեանը մէջ, ի՛նչ սքանչելի փոփոխութիւն մը շուտով պիտի ըլլայ ընդհանուր մարդկային ազգին վիճակին մէջ: Քրիստոսի եկեղեցւոյն մէջ աշխարհք դարձի բերելու համար արդէն բաւական զօրութիւն կայ, եթէ այս զօրութիւնը Աստուծոյ օգնութեամբը գործածուի: Պէտք է որ այս զօրութիւնը երևան ելլէ, բայց ասիկա պիտի չըլլայ մինչև որ քրիստոնեայք մեղաւորներ

րուն հետ անոնց իրկութեանը նկատմամբ խօսակցելու պարտականութիւնը ՚ի գործչդնեն:

3. Բան մը չի կրնար կատարուիլ այս գործիս մէջ, մինչև որ իւրաքանչիւրք իր անձնական պատասխանատուութիւնը սրտանց չգրայ:

4. Ընթերցո՛ղ, կը դաւանի՞ս թէ Քրիստոսի աշակերտ ես: Մինչև ցարդ հաւատարմաբար, երկիւղածութեամբ և յարատեութեամբ այս մեծ պարտքը կատարեցի՞ր: Խիղճդ, առանձին սենեակդ, ընտանիքդ և բարեկամներդ վկայութիւն կու տա՞նքու հաւատարմութեանդ: Եթէ ոչ, պարտական չե՞ս անդամ մըն ալ քննութեան առնել ինքզինքդ ճշմարիտ քրիստոնեայ համարելու հիմունքը, յիշելով որ, եթէ մէկը Քրիստոսի հոգին չունի, անիկա անորը չէ: Ար սիրե՞ս զՔրիստոս, կը սիրե՞ս անոր գործը, կը սիրե՞ս մարդոց հոգիները. կըրնա՞ս ուրեմն դանց ընել քու ընկերներուդ փրկութեանը համար աշխատելու այս պարտականութիւնը: Ետերուն ըսածին պէս դուն ալ մի ըսեր թէ՛ « Ես յարմարութիւն չունիմ այդ գործին »: Բարեպաշտ սիրտ մը, անձնանուիրութիւն առ Աստուած, և մարդոց հոգիներուն վրայ ջերմեռանդ սէր, ա-

սոնք են պէտք եղած գլխաւոր յարմարութիւնները . և միթէ կրնա՞յ ըլլալ որ ճշմարիտ Քրիստոնեայ մը ասոնցմէ զուրկ գտնուի : Եթէ իրօք կը հաւատաս թէ բոլորտիքդ գտնուող մեղաւորները յաւիտենական կորստեան վտանգի մէջ են, չե՞ս կրնար զգուշացնել զանոնք : Եթէ կը հաւատաս թէ Քրիստոս կարող է և կամեցող բոլոր իրեն դիմողները փրկելու , չե՞ս կրնար քու ճանչուորներդ հրաւիրել և թախանձել զանոնք որ առանց վայրկեան մը յապաղելու այս ոգորմութեան ճրի պարզեւր ընդունին : Երգաւորները իրօք և զարհուրելի կերպով յաւիտենական կորստեան ենթակայ եղած չե՞ն , ինչպէս որ այրելու վրայ եղող տան մը մէջ գտնուող մարդիկ բոցերուն մէջ կորսուելու ենթակայ են : Եթէ բարեկամներէդ և ազգականներէդ մէկը այսպիսի վտանգի մը մէջ տեսնես , կը կայնիս մասնաւոր յարմարութիւններո՞ւ կը սպասես , թէ խրատ կու տաս , և կ'աղաղակես անոնց որ կեանքերնուն աղատութեանը համար փախչին , և կամ ներս վազելով զանոնք կրակէն դուրս քաշելու կը ջանաս : Զե՞ս կրնար նոյնչափ , և աւելի մեծ եռանդով խրատել մեղաւորները գալու բարկութենէն փախչելու . և եթէ դանդաղին , չե՞ս կրնար անոնց թըչ-

ուառ վիճակին ողորմելով , համոզել զանոնք որ շուտով իրենց մեղքերուն վրայ ապաշխարելով և Քրիստոսի ապաւինելով , դիմեն ամուր և ապահով տեղ մը : Մի ջանար արդարացնել այսպիսի պարզ ու յայտնի պարտականութեան մը զանցառութիւնը : Աստուծոյ պահանջմունքները կան ու կը մնան քու վրադ , կորստեան գացող հոգիներուն աղաղակները ամէն դիէ կը հասնին քեզի , 'ի մահ դատապարտուելու տարուող մարդոց հեծութիւններն ականջներդ կը հնչեցընեն , և տակաւին կրնա՞ս անդործ կենալ : Խղէ՛ ուրեմն ծուլութեան կապանքը , շուտով գործի սկսէ , Տէրոջը ապաւինելով և անոր օգնութիւնը խնդրելով քաջասիրտ եղիր , Աստուծմէ իմաստութիւն խնդրելով իմաստուն եղիր , շատերը արդարութեան առաջնորդէ , և երկնից հաստատութեանը լոյսին և աստղերուն պէս պիտի փայլիս յաւիտեանս յաւիտենից :

Վ. Ե. Ր. Զ.

2183

*[Faint, illegible text from the reverse side of the page, appearing as bleed-through.]*



